Հայկական գիտահետազոտական հանգույց

Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9780

Մ. ԱԼՏՄԱՆ

# 17-ՐԴ
# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
# ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐԸ

ՊԵՏՀՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ 1931

ЗКИМ8
Ա-34

ЗКИМ8
Կ-34
24 SEP 2006
1 DEC 2009

Մ. ԱԼՏՄԱՆ

# 17-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐԸ

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

4 FEB 2013

9780

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1782
ԳԼԱՎԼԻՏ 6701(բ)
ՊԱՏՎԵՐ № 4283
ՏԻՐԱԺ 7000

Дублетный фонд
госуд. библиотеки СССР
им. В. И. Ленина

4630-84

# 17-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐ (ՄՅՈՒԴ)

Սեպտեմբերի 6-ին ամբողջ աշխարհի հեղափոխական յերիտասարդությունը դուրս կգա քաղաքների և գյուղերի փողոցները տասնյոթերորդ անգամը տոնելու իր Միջազգային Յերիտասարդական Որը: Ինչպես առաջին միջազգային յերիտասարդական որերին, վորոնք անց եյին կացվում աշխատավոր յերիտասարդության պանծալի առաջնորդ Կարլ Լիբկնեխտի ղեկավարությամբ, այնպես ել ներկա Միջազգային Յերիտասարդական Որը անց է կացվում հեղափոխական լոզունգներով, վորոնք կոչ են անում աշխատավոր յերիտասարդությանը կռվել կապիտալիստական տիրության դեմ, հանուն միջազգային սոցիալիստական հեղափոխության:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐԻԶԻՍԻ ՀԱՐՎԱԾՆԵՐԸ

17-րդ Միջազգային Յերիտասարդական Որը անց է կացվում առանձնապես կարևոր և պատասխանատու մոմենտում: Կապիտալիստական վողջ աշխարհը բռնված է պատմության մեջ դեռ չտեսնված տնտեսական կրիզիսով: Կապիտալիստները—բոլոր գործարանների, ֆաբրիկաների և հանքերի տերերը բուրժուական պետություններում՝ իրենց ներքին հակամարտությամբ (մրցակցություն) աշխատում են հաղթահարել իրար:

Նրանք արտադրել են հսկայական քանակությամբ ապրանքներ, և այժմ ապրանքները գնորդ չեն գտնում, վորովհետև միակ գնորդները հանդիսանում են աշխատավոր լայն մասսաները, վորոնք զրկված են գնելու կարողությունից: Աշխատավորների հսկայական զանգվածներ՝ շնորհիվ կապիտալիստական ճնշման մշտական ուժեղացման, աշխատավարձի պակասեցման, հարկերի ավելացման, միլիոնավոր մարդկանց գործազրկության—ի վիճակի չեն գնելու նույնիսկ ապրանքների այն քանակը, վոր առաջ գնում եյին նրանք: Կապիտալիստների պահեստները և վաճառատները լիք—լեցուն են ապրանքով: Կապիտալիստները կրճատում են ապրանքների արտադրությունը: Հազարավոր մեծ ու փոքր գործարաններ և ֆաբրիկաներ փակված են: Հազարավոր ֆաբրիկաներ, հանքեր աշխատում են շաբաթական յերկու կամ ամենաշատը՝ յերեք որ: Ավելի պարզ պատկեր կազմելու համար, թե ինչ հետևանքներ է ունեցել այդ կրիզիսը՝ բերենք մի—յերկու որինակ խոշորագույն կապիտալիստական յերկրների տնտեսության մի քանի հիմնական ճյուղերի դրության մասին:

Վերցնենք «ամենաուժեղ» յերկիրը—Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգները: Միմիայն վերջին մի տարվա ընթացքում—1930 թ. հունվարից մինչև 1931 թ. հունվարը, պողպատի արտադրությունը պակասել է մի յերրորդով, չուգունի արտադրությունը՝ գրեթե կիսով չափ, ածխի արտադրությունը՝ մի քառորդով:

Ավելի լավ չե դրությունը նաև մյուս «ուժեղ» կապիտալիստական յերկրում—Անգլիայում: Այնտեղ պողպատի արտադրությունը պակասել է գրեթե կիսով չափ, նույնքան պակասել է և չուգունի արտադրությունը: Գերմանիայի գործարանները այժմ տալիս են



միայն կեսը ապրանքների այն քանակության, վոր նրանք տալիս եյին մի քանի տարի առաջ:

Բայց և այնպես կապիտալիստների պահեստներում ապրանքների պաշարը չի պակասում, այլ ընդհակառակը, ավելանում է: Միմիայն վերջին տարվա ընթացքում պղնձի պաշարները աճել են յերկու անգամ, կաուչուկի պաշարները նույնպես յերկու անգամ, իսկ ածխի պաշարը՝ յերեք անգամ, և այլն:

Ապրանքների արտահանությունը և ներմուծումը բուրժուական պետություններում շարունակ պակասում է, արտաքին առևտրի շրջանառությունը կրճատվում է: Հսկա քանակությամբ բանկեր, արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններ հայտարարում են իրենց սնանկացած: Սնանկանում են վոչ միայն մանր և միջակ բանկեր, առևտրական ձեռնարկություններ և այլն, այլև համաշխարհային խոշորագույն հսկաներ: Որինակ վերջերս սնանկացավ Յեվրոպայի ամենախոշոր բանկերից մեկը Ավստրիայում, վորի անկումը հարված հասցրեց յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության:

## ՏԱՍՆՅԱԿ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ ՍՈՎԻ ՅԵՆ ՄԱՏՆՎԱԾ

Դրությունը սրվում է նաև այն բանի հետևանքով, վոր արդյունաբերական կրիզիսի հետ միասին կապիտալի յերկրները բռնված են գյուղատնտեսական աննախընթաց սուր կրիզիսով: Այս կրիզիսն արտահայտվում է մի կողմից նրանով, վոր պահեստներում կուտակվում են հսկա քանակությամբ գյուղատնտեսական մթերքներ, իսկ մյուս կողմից՝ բազմամիլիոն չը—

քավոր–միջակ գյուղացիներ քայքայվում են և նրանց վրա յե ընկնում կրիզիսի ամբողջ ծանրությունը: Կալվածատերերը և կապիտալիստական խոշոր ֆերմերները, չնայած գյուղատնտեսական մթերքների ցածր գներին (մի քանի գյուղատնտեսական մթերքների գները ընկել են 60 և ավելի տոկոսով), բարձր տեխնիկա կիրառելու և գյուղատնտեսական բանվորներին և մանր գյուղացիությանը դաժանաբար շահագործելու միջոցով ստանում են մեծ շահույթներ գյուղատնտեսական մթերքները վաճառելիս:

Այնինչ, չքավոր և մանր գյուղացիների հսկայական բանակը հնարավորություն չունենալով գործադրելու գյուղատնտեսական լավ մեքենաներ, ուսերի վրա կրելով վերին աստիճանի ծանր հարկեր, գնալով ավելի և ավելի աղքատանում և քայքայվում է:

Վերցնենք օրինակ նույն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնք դեռ նոր եր, վոր պարծենում եյին իրենց բարգավաճումով: 1931 թ. հունվարին Ամերիկյան Կարմիր Խաչը յերկրում հաշվում եր 700 շրջաններ, վորոնց բնակչությունը կարիք ուներ նպաստի: Բացառիկ ծանր պայմաններում են գտնվում այն շրջանները, վորտեղ ծխախոտ և բամբակ են մշակում: Այդ շրջանների վարձակալները, չքավոր գյուղացիությունը և բանվորները հասել են ծանր աստիճանի աղքատության:

Գյուղացիների անասունները մեծ մասամբ սատկել են, մորթվել կամ գտնվում են այնպիսի վիճակում, վոր միանգամայն անհնար է օգտագործել նրանց: Ինվենտարը կամ ծախված է, կամ ջարդված: Սերմ չկա: Աշխատող ձեռները ուժասպառ են յեղել քաղցից և հիվանդություններից:



Վերջին 30 տարվա ընթացքում Ամերիկայում վոչ մի կրիզիս չի ունեցել այնքան սոսկալի հետեվանքներ, վորքան ներկա կրիզիսը:

Նույնիսկ բուրժուական թերթերն ստիպված են խոստովանել, վոր անօրինակ կերպով ծանր է այն դրությունը, վորի մեջ գտնվում են ամերիկական մանր և միջակ գյուղացիները (ֆերմերները:) Ահա ինչպես է նկարագրում «Դի Նեյշըն» ամերիկյան բուրժուական թերթը գյուղացիների վիճակը հարավային նահանգներից մեկում:

«Միացյալ Նահանգներում 1931 թվին հարյուր հազարավոր գյուղացի ընտանիքներ սովամահ են լինում: Համոզվելու համար, հերիք է մի բոպե կանգ առնել Կարմիր Խաչի վորևե կայանի առաջ հազարավոր գյուղական համայնքներից մեկում. դուք կտեսնեք այնտեղ ցնցոտիներով ծածկված յերեխաներ, քաղցից և ցրտից կապտած: Դուք կտեսնեք ծայրաստիճան հուսահատ մարդկանց, վորոնք սպասում են ողերի՝ բարեգործական խոհանոցից կերակուր ստանալու համար, դուք կհանդիպեք խելակորույս մայրերի, վորոնք օգնություն են աղերսում իրենց յերեխաների համար, վորոնք մեռնում են սովից կամ բազմատեսակ վարակիչ հիվանդություններից»:

## ՄԱՐԴԻԿ ՍՈՎԻՑ ՄԵՌՆՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ԱՅՐՈՒՄ ԵՆ ՀԱՑԸ

Մինչդեռ տասնյակ, հարյուր հազարավոր մարդիկ, չափահասներ և յերեխաներ սովամահ են լինում մի կտոր հացի համար, նույն Ամերիկայում միլիոնավոր ցենտներ հացահատիկներ փթում են կապիտալիստ-

ների պահեստներում, հսկայական քանակությամբ ցորեն այրվում է կապիտալիստների հրամանով շոգեշարժների հնոցներում կամ պարզապես թափվում է ծովը: Կապիտալիստներն այդ անում են, վորպեսզի թույլ չտան գյուղատնտեսական մթերքների գների անկումը, ցանկանալով բարձրացնել իրենց շահերը:

Լավ չէ գյուղատնտեսության դրությունը նաև կապիտալիստական մյուս յերկրներում: Լեհաստանում, Գերմանիայում, Անգլիայում, Չեխո-Սլովակիայում չքավոր և միջակ գյուղացիության բազմամիլիոն մասսաները ընկնում են գյուղատնտեսական ճգնաժամի հարվածների տակ: Առանձնապես ծանր է աշխատավոր գյուղացիների վիճակը այսպես կոչված գաղութային և կիսագաղութային յերկրներում, այսինքն այն յերկրներում, վորոնք գտնվում են կապիտալիստական (իմպերիալիստական) խոշոր յերկրների լծի տակ, ինչպես Հնդկաստանը, Չինաստանը և այլն: Այնտեղ միլիոնավոր գյուղացիներ բառի բուն իմաստով մեռնում են սովից: Որինակ Չինաստանում սովի յեն մատնված մոտ 50 միլիոն գյուղացիներ:

## ԿԱՐԻՔԻ ՅԵՎ ԴՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ

Այսպիսով մենք կարող ենք յեզրակացնել, վոր կապիտալիստական աշխարհը գտնվում է չտեսնված մի ճգնաժամի ջղաձգությունների մեջ, վորը ընդգրկել է վոչ միայն արդյունաբերությունը, այլ և գյուղատնտեսությունը, և այդ ճգնաժամը բռնել է կապիտալիստական բոլոր յերկրները: Գյուղատնտեսական կրիզիսը միանալով արդյունաբերական կրիզիսի հետ խորացնում են ընդհանուր ճգնաժամը, վորը քայքայում է



կապիտալիզմի հիմքերը համաշխարհային պատերազմի սկզբից:

Բուրժուազիան յելք է փնտրում այն ծանր վիճակից, վորի մեջ ընկել է կրիզիսի հետևանքով: Մի յելքը նա տեսնում է կրիզիսի ամբողջ ծանրությունը բանվոր դասակարգի և քաղաքի ու գյուղի աշխատավոր ամենալայն մասսաների ուսերին գցելու մեջ: Այն բոլոր յերկրներում, վորտեղ իշխում է բուրժուազիան, աշխատավարձը պակասում է չտեսնված չափերով: Ավելանում է բանվորական որը: Փաստորեն վոչ մի յերկրում (բացի ԽՍՀՄ-ից) չկա 8-ժամյա բանվորական որ: Հարկային ծանրությունը շարունակ մեծանում է և վերջապես ահռելի չափերով աճում է գործազրկությունը:

Կապիտալիստական յերկրներում (չհաշված գաղութները և կիսագաղութները) գործազուրկների բանակը հասնում է 35-37 միլիոն մարդու: Իսկ յեթե գործազուրկների այս թիվը վերցնենք ընտանիքներով միասին, ապա սովի մատնված կամ լավագույն դեպքում կիսաքաղց բազմության թիվը կհասնի 100 միլիոնի: Սա գրեթե ԽՍՀՄ ազգաբնակության յերկու յերրորդն է, կամ մեկ ու կես անգամ, ավելի, քան Գերմանիայի ազգաբնակությունը:

Առանձնապես ծանր է աշխատավոր յերիտասարդության կյանքը: Չնայած վոր կապիտալիստական ձեռնարկություններում կոմբայների և այլ սիստեմների մասսայական կիրառման հետևանքով այժմ յերիտասարդությունը ավելի շատ է ներգրավվում արտադրության մեջ, այնուամենայնիվ նրա դրությունը չափազանց ծանր է: Յերիտասարդ կամ պատանի բանվորը առհասարակ ստանում է չափահաս բանվորի ստացածի կեսը և յերբեմն ավելի պակաս: 14-ից 16 տարեկան պատանիներ աշխատում են կապիտալիստական մանր

և միջակ ձեռնարկություններում որական 10, 12, 14 և նույնիսկ ավելի ժամ: Անչափահասների վերաբերմամբ կամայականությունը անսահման է: Բայց եվ ավելի ծանր է բանվոր յերիտասարդության այն մասի վիճակը, վորը դուրս է շպրտված արտադրությունից: 10 միլիոն յերիտասարդ բանվորներ կապիտալիստական յերկրներում աշխատանք են փնտրում և չեն գտնում: Յերիտասարդ գործազուրկի վիճակը գրեթե ամեն տեղ ավելի վատ է չափահաս գործազուրկի վիճակից: Գործազուրկ ջահել աղջիկը և գործազուրկ յերիտասարդը զգալի չափով ավելի պակաս նպաստ են ստանում, քան չափահասները: Նույնիսկ ավելին. որինակ Գերմանիայում կառավարությունը այժմ հրատարակել է մի օրենք, վորը վորևիցե նպաստից զրկում է մինչև 21 տարեկան բոլոր գործազուրկներին: Ուստի և պատահական չէ, վոր ինքնասպանությունների թիվը գործազուրկ յերիտասարդության մեջ որեցոր ավելանում է: Գերմանական կոմյերիտական թերթ «Յունգե Գարդեն» հաշվել է, վոր Գերմանիայում յուրաքանչյուր ժամը կատարվում է մի ինքնասպանություն: Այս է բանվոր յերիտասարդության բախտը կապիտալի յերկրներում:

Ավելի լավ չէ, իսկ շատ կողմերով եվ ավելի ծանր է բատրակ յերիտասարդության վիճակը: Իտալիայում կան մոտ 300 հազար ջահել գործազուրկ բատրակներ, իսկ Գերմանիայում 1.520 հազար: Հնդկաստանում կան 20 միլիոնից վոչ պակաս բատրակներ, վորոնք չունեն մշտական աշխատանք, նրանց մեծ մասը յերիտասարդներ են: Սակայն նախանձելի չէ նաև այն ջահել բատրակների վիճակը, վորոնք բախտ ունեն շահագործվելու կուլակների և կալվածատերերի կողմից: 18-ժամյա բանվորական որ, կեղտոտ հավարուն, ջրալի ապուր, հսկիչների բռնությունները և տուգանքները — ահա այն ջահել բատրակների վիճակը, վորոնք առայժմ «բախտ» ունեն աշխատելու:

Յեթե այս բոլորին ավելացնենք այն, վոր թե՛ բանվոր յերիտասարդությունը և թե՛ չափահաս բանվորները ստիպված են տանել կապիտալի դիկտատուրայի քաղաքական ճնշումը — ապա պարզ կլինի այն անտանելի ծանր դրությունը, վորի մեջ գտնվում են բանվոր դասակարգը և աշխատավորները շնորհիվ բուրժուազիայի հարձակմանը, վորով նա ձգտում է դուրս գալ ծանր ճգնաժամից:

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ

Յերկրորդ ճանապարհը, վորով բուրժուազիան փորձում է յելք գտնել կրիզիսից — դա պատերազմն է: Իրենց ապրանքների համար նոր շուկաներ գտնելու նպատակով բուրժուական պետությունները պատրաստվում են կռիվ մղել այդ շուկաների համար: Քանի վոր շուկաները (առաջին հերթին գաղութները և կիսագաղութները) բաժանված են կապիտալիստական գլխավոր պետությունների մեջ, հարկավոր է կրկին վերաբաժանել այդ շուկաները: Վոչ մի կապիտալիստական յերկիր խաղաղ ճանապարհով չի ուզում տալ և չի տա իր հողերը: Շուկաների վերաբաժանումը կարող է կատարվել միայն բռնի ճանապարհով, այսինքն պատերազմի օգնությամբ: Դրա համար եվ կապիտալիստական բոլոր յերկրները տենդորեն պատրաստվում են նոր պատերազմի: Կապիտա-

լխաների սպառազինումներն աճում են օրեցօր։ Այնինչ արդյունաբերության բոլոր ճյուղերը կապիտալիստական յերկրներում ապրում են խոր ճգնաժամ և անկում. միայն մի ճյուղը բարգավաճում է և ընդարձակվում — դա ռազմական արդյունաբերությունն է։ Ֆրանսիայում բուռն թափով աշխատում են 109 խոշոր ռազմական գործարաններ։ Գերմանիայում աշխատում են 44 ռազմա-արդյունաբերական ձեռնարկություններ և 250 խոշոր քիմիական գործարաններ, Լեհաստանում՝ 28 ռազմական գործարաններ։ Առանձնապես զարգացած է ռազմական արդյունաբերությունը Չեխո-Սլովակիայում։ Այս գործարանները աշխատում են գլխավորապես Լեհաստանի և Ռումինիայի — այսինքն՝ մեր «բարի» հարևանների համար։

Բուրժուազիան հատուկ ուշադրություն է դարձնում իր բանակների տեխնիկական սպառազինման հարցին։ Տասնյակ հազարավոր ավտոմոբիլներ և այլ մոտորներ այժմ մտցվում են բանակներում։ Այնպիսի մի գիտություն, ինչպիսին քիմիան է, լիովին տրամադրված է ռազմական նպատակների։ Բուրժուական գիտնականները ներկայումս այնպիսի հնարքներ են գտել, վոր կարելի յե պայթյուններ սարքել ահագին տարածությունների վրա, բավական է սեղմել մի կոճակ բազմաթիվ կիլոմետր հեռավորության վրա պայթյուն առաջացնելու համար։ Դեռ ավելին. այժմ կարելի յե նստած շտաբում ֆրոնտից հեռու՝ հատուկ ապարատների միջոցով ղեկավարել սավառնակներ, ռազմանավեր, և այլն։ Այժմ արդեն գոյություն ունեն հրեշավոր գյուտեր, վորոնք հնարավորություն են տալիս մի քանի րոպեյի ընթացքում մոխիր դարձնել հսկայական քաղաքներ և շրջաններ՝ մարդկանց, անասունների և



բուսականության հետ միասին։ Իսկ յեթե դրան ավելացնենք բուրժուական պետությունների ոդային և ծովային նավատորմի հսկա աճումը, ապա պարզ կլինի, թե ինչպես են կապիտալիստները պատրաստվում պատերազմի և վորքան սոսկալի կլինի պատրաստվող պատերազմը իր զոհերի թվով և ավերներով։

Հասկանալի յե, վոր նման սպառազինության համար հարկավոր են ահագին դրամներ։ Բայց բուրժուազիան դրամ չի խնայում։ Ամեն տարի կապիտալիստական պետությունները բաց են թողնում միլիարդներով ռուբլիներ սպառազինությունների, միլիոնավոր բանակներ պահելու, պատերազմը պատրաստելու համար. և ամեն տարի այդ գումարները գնալով ավելանում են։ Անդադար աճում են և բուրժուազիայի բանակները։ Առանձնապես արագ են աճում Խորհրդային Միության սահմանակից պետությունների բանակները։ Լեհաստանում օրինակ 1923 թ. բանակում կար 266 հազար մարդ, իսկ այժմ 300 հազարից ավելի։ Ռումինիայի բանակը 1923 թ. բաղկացած էր 161 հազար հոգուց, իսկ այժմ 208 հազարից։ Բացի դրանից, այս բոլոր պետությունների մեջ կան ֆաշիստների հսկայական բանակներ, վորոնք ամեն րոպե պատրաստ են զենք վերցնելու։ Պատերազմի պատրաստության կապակցությամբ բուրժուազիան հատուկ ուշադրություն է դարձնում ազգաբնակության՝ առաջին հերթին յերիտասարդության ռազմականացման վրա։ Գրեթե բոլոր յերկրներում կապիտալիստները ստեղծել են խոշոր թվով յերիտասարդական կազմակերպություններ, վորոնց հիմնական նպատակն է կադրեր պատրաստել գալիք պատերազմի համար։ Այդ կազմակերպություններին են պատկանում այնպիսի բուրժուական յերիտա-

սարդական միություններ ինչպես Y.M.C.A. (յերիտա-սարդ քրիստոնյաների միություն), բոյսկաուտները, կաթոլիկ յերիտասարդների միությունը և ուրիշ զա-նազան սպորտական և կրթական կազմակերպություն-ներ: Յերիտասարդական այս միությունների թվին, որոնց օգնությամբ բուրժուազիան իր համար պատ-րաստում է բանակին հավատարիմ կադրեր, պատկա-նում են նաև այսպես կոչված սոցիալիստական յերի-տասարդական միություններ: Այս միությունների նպատակն է սոցիալիստական ֆրազների օգնությամբ ի-րենց հետևից քաշել հարձակվող բուրժուազիայի հար-վածների տակ հեծող աշխատավոր յերիտասարդներին, հեռացնել նրանց ուշադրությունը իսկական հեղափո-խական կռվից և դաստիարակել նրանց որպես կապի-տալի հլու հպատակներ:

Նկատի ունենալով կապիտալիստների տենդոտ աշ-խատանքը ավելացնելու իրենց սպառազինումները, նրանց բուռն ջանքերը ռազմականացնելու ազգաբնակությունը և մեծացնելու բանակը, ուշադրության առնելով մի-ջազգային սրված հարաբերությունները, կարելի յե վստահաբար ասել, որ պատերազմը կրկին դրված է օ-րակարգում: Յեվ ինչ որ ամենակարեվորն է, այդ պատերազմը նախ և առաջ և առաջին հերթին ուղղված կլինի ԽՍՀՄ դեմ:

## ՍՎԻՆՆԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ԽՍՀՄ ԴԵՄ

Բոլոր յերկրների բուրժուազիայի հույսերը, թե Խորհրդային յերկիրը կկործանվի կամ կվերածվի բուր-ժուական պետության—օդ ցնդեցին: Խորհրդային Մի-ությունը ոչ միայն չկործանվեց, այլ և շարունակում



է հաջող կերպով կառուցել սոցիալիզմ, օրեցօր ձեռք բերելով նորանոր վիթխարի նվաճումներ: Խորհրդային յերկիրը, բանվոր դասակարգի և նրա ավանգարդ կո-մունիստական կուսակցության ղեկավարությամբ, ոչ միայն թույլ չավեց կապիտալիստական ամենակուլ-ներին կուլ տալ իրեն, այլ և ձեռնարկեց համատարած կոլեկտիվացման հիման վրա վերջնականապես ջնջելու կապիտալիստական վերջին լուրջ դասակարգի—կուլա-կության արմատները: Յեվ մինչդեռ կապիտալիստա-կան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը ապրում են ամենախոր ճգնաժամ, Խորհրդային Միու-թյան արդյունաբերությունը և գյուղատնտեսությու-նը աճում և բարգավաճում են աննախընթաց տեմպե-րով:

Յերկրագնդի մեկ վեցերորդ մասը գրավող, անհուն հարստությունների տեր և 160 միլիոն ազգաբնակու-թյուն ունեցող մեր յերկիրը հում նյութի և ապրանք-ների սպառման հսկայական շուկա յե ներկայացնում կապիտալիստների համար: Ուստի և բուրժուազիան ամենկերպ ուժեղացնում է պատերազմի պատրաստու-թյունը ԽՍՀՄ դեմ. այդ պատրաստության ամբողջ ծանրությունը ընկնում է աշխատավոր բազմամիլիոն մասսաների ուսերին:

Բավական է հետևել վերջին յերկու տարվա անց-քերի զարգացմանը տեսնելու համար, թե ինչպես կա-պիտալիստական գլխավոր յերկրների բուրժուազիան օր-օրին պատրաստում է այդ հարձակումը: Սկսած այն անհաջող փորձից, որով նրանք ցանկանում էին պատերազմի քաշել մեզ Չին-Արևելյան յերկաթուղու վրա իմպերիալիստների կատարած յելույթի ժամա-

նակ, ներկայումս սիստեմատիկ կերպով ծավալվում և կամպանիաների մի շարք Խորհրդային Միության դեմ: Այսպես կոչված Հռոմի պապի «խաչակրաց արշավանքը», Կուտեպովի գործը, մահափորձ Վարշավայի խորհրդային լիազոր-ներկայացուցչության վրա, այսպես կոչված «խորհրդային դեմպինգի», «ստրկական աշխատանքի» կամպանիաները, և վերջապես Ֆրանսական ֆաշիստների յելույթը—այս բոլոր կամպանիաները վոչ այլ ինչ են, բայց յեթե ԽՍՀՄ դեմ պատերազմ պատրաստելու ընդհանուր շղթայի օղակները: Այս բոլոր յելույթները կատարվում են վորոշ նպատակներով—ազգաբնակչության լայն մասսաների մեջ առաջ բերել հակախորհրդային տրամադրություններ, ստեղծել հարմար պայմաններ նոր արյունալի ավանտյուրաներ սարքելու համար:

Բացի դրանից վերջին ժամանակներս բուրժուազիան օգտագործում եր ևս մի միջոց. գլխավոր շտաբները, առաջին հերթին ֆրանսական բանակի գլխավոր շտաբը, ձեռք-ձեռքի տված Ռուսաստանի նախկին գործարանատերերի և կալվածատերերի հետ, վորոնց հեղափոխությունը դուրս է շպրտել յերկրից, ծավալում եյին վնասարարական, ավերիչ լայն աշխատանք Խորհրդային Միության ներսում: Վնասարարական այս կազմակերպությունները, վորոնք հետո բաց արվեցին ՄՊՔՎ կողմից (այսպես կոչված «Արդյունաբերական կուսակցությունը», մենշևիկների «Միութենական Բյուրոն» և այլն) գլխավորապես նպատակ ունեյին յերկրում կրիզիս առաջ բերել և դրանով հեշտացնել իմպերիալիստների հարձակումը Խորհրդային Միության վրա:



ԽՍՀՄ դեմ պատերազմի պատրաստության ուժեղացման մասին վկայում են նաև այնպիսի փաստեր, ինչպես վերջին ժամանակներս տեղի ունեցած ռազմական դաշինքների վերանորոգումը Լեհաստանի և Ֆրանսիայի միջև, Լեհաստանի և Ռումինիայի միջև, ռազմանավերի ծովային ցույցը Լատվիայի ափերի մոտ և այլն:

Համաշխարհային հեղափոխության շտաբի՝ Կոմինտերնի Գործկոմի վերջերս տեղի ունեցած 11-րդ պլենումը հրավիրեց բոլոր կոմունիստական կուսակցությունների հատուկ ուշադրությունը այն բանի վրա, վոր անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքը ԽՍՀՄ վրա ռազմական հարձակում գործելու պատրաստության դեմ: Պլենումն իր վորոշումներում հայտարարում է.

«Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի փոխելու և ԽՍՀՄ աշխատավորների դեմ մղվող պատերազմը՝ սեփական բուրժուազիայի դեմ մղվող պատերազմի փոխելու լոզունգը պետք է դառնա կապիտալիստական յերկրների բանվորական միլիոնավոր մասսաների ամենաժողովրդական լոզունգը»:

## ԲԱՐՁՐԱՆՈՒՄ Ե ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԼԻՔԸ

11-րդ պլենումը միաժամանակ ընդգծեց, վոր պատերազմի և ԽՍՀՄ դեմ պատրաստվող հարձակման վտանգի դեմ մղվող պայքարը սերտորեն կապված է այն ընդհանուր պայքարի հետ, վոր մղվում է բանվոր դասակարգը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ՝ բուրժուազիայի դիկտատուրայի դեմ, հեղափոխական ճանապարհով ելք գտնելու այն ծանր դրությունից, վորի մեջ դցել է [illegible] ամբողջ



4630-84

աշխարհի աշխատավոր մասսաներին: Բանվոր դասակարգը և աշխատավոր մասսաները ավելի և ավելի վճռականորեն կանգնում են բուրժուազիայի և նրա ֆաշիստական և սոցիալ-ֆաշիստական գործակալների դեմ պայքարելու հեղափոխական ճանապարհի վրա: Աճում է հեղափոխական վերելքը կապիտալիստական բոլոր յերկրներում: Թեև այդ վերելքը կատարվում է անհամաչափ, այնուամենայնիվ մենք նկատում ենք վերելքի անընդհատ ծավալումը: Մի շարք յերկրներում, ինչպես Գերմանիա, Լեհաստան, Սպանիա—հեղափոխական շարժման ալիքները գնալով աճում են: Չինաստանում խորհուրդների դրոշը ծածանվում է հսկայական յերկրամասի վրա, 50 միլիոն ազգաբնակչությամբ և պանծալի Կարմիր Բանակը հերոսաբար հետ է մղում իմպերիալիստների վարձկան Չան-Կայ-Շիի բոլոր հարձակումները: Հնդկաստանում, վոր բռնված է ապստամբությունների հրդեհով, հեղափոխական շարժումը գնալով պարզանում է: Հասունանում են հեղափոխության նախադրյալները նաև մի շարք այլ յերկրներում:

Գլխավորել բանվորների և գյուղացիների հեղափոխականացող մասսաները, ղեկավարել նրանց պայքարը կապիտալի հարձակման դեմ, էլ ավելի մոբիլիզացիայի յենթարկել աշխատավորության միլիոնավոր մասսաները պայքարելու պատերազմի և ԽՍՀ Միության սպառնացող հարձակման դեմ, ջախջախել սոցիալ-ֆաշիստներին,, վորպես բուրժուազիայի սոցիալական գլխավոր հենարանը, խորտակել ֆաշիստներին, նվաճել բանվոր դասակարգի մեծամասնությունը կոմունիզմի կողմը և առաջնորդել նրան դեպի կռիվ հանուն պրոլետարիատի դիկտատուրայի—ահա այն հիմնական մարտական խնդիրները, վորոնք դրված են բոլոր յերկրների կոմունիստական կուսակցությունների առաջ:



Լուծել այս պատմական խնդիրները կոմունիստական կուսակցությունները կարող են միայն այն պայմանով, յերբ վճռական հակահարված տան ոպորտունիզմի, հատկապես աջ ոպորտունիզմի, վորպես գլխավոր վտանգի ներկա էտապում, բոլոր արտահայտություններին, և հաղթահարեն մինչև այժմ նկատված՝ կոմկուսների աշխատանքի հետ մնալը դասակարգային պայքարի հարաճուն տեմպերից:

Ահա այս հիմնական խնդիրներից են բխում այն խնդիրները, վորոնք դրված են կոմունիստական յերիտասարդության միությունների առաջ կապիտալիստական յերկրներում: Առաջիկա Միջազգային Յերիտասարդական որը ցույցարարների շարքասյուների դրոշների վրա պետք գրվեն լոզունգներ, վորոնք կոչ են անում ամբողջ բանվոր յերիտասարդությանը՝ կռվել բուրժուազիայի դիկտատուրայի դեմ—պրոլետարիատի դիկտատուրայի համար, սոցիալ-ֆաշիստների և նրանց ջահել ավանգարդների՝ սոցմոլի դեմ, ֆաշիստների-բուրժուազիայի այդ մարտական բրիգադի դեմ:

Ընդդեմ պատրաստվող պատերազմի, հանուն ԽՍՀՄ—սոցիալիզմ կառուցող յերկրի, համաշխարհային պրոլետարիատի հայրենիքի պաշտպանության: Ամբողջ յերիտասարդությունը կոմսոմոլի շարքերում:

ԿԻՄ-ի բանակը 17-րդ Միջազգային Յերիտասարդական որվան դիմավորում է վորպես ամրակուռ, ավելի քան յերբևէ միաձույլ և աճած բանակ:

## ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՀԱԿԱՀԱՐՎԱԾ ԿՏԱ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՄԱՆԸ

Բուրժուազիայի կատաղի հարձակումը առանձնապես ուժեղ հարվածում է բանվոր և աշխատավոր յերիտասարդության շահերին, ստեղծում է յերիտասարդության հսկայական կադրեր, վորոնք վճռականորեն դուրս են գալիս վայրենի շահագործման դեմ: Ավելի հաճախակի յեն դառնում յերիտասարդ բանվորների ինքնուրույն գործադուլները: Ահա մի քանի որինակներ նման գործադուլների:

Ապրիլի 11-ին Համբուրգ (խոշոր քաղաք Գերմանիայում) Գոզա-տաուերի գործարանի յերիտասարդ բանվորները կես ժամով դադարեցրին աշխատանքը և ստիպեցին ձեռնարկատերերին հրաժարվել աշխատավարձը իջեցնելու մտադրությունից:

Բայց յերիտասարդությունը սրանով չբավականացավ: Հետևյալ յերկուշաբթի գումարվեց նոր ժողով, վորտեղ կրկին անգամ քննվեց աշխատավարձի իջեցման հարցը: Ժողովը սուր խորհրդակցությունից հետո միաձայն վորոշեց սկսել կռիվը: Ընդունվեց պայքարի ծրագիր հետևյալ պահանջներով.

1. Հրաժարվել աշխատավարձն իջեցնելու մտադրությունից,

2. Իսկույն վերացնել պարգևների պակասեցումը,

3. Աշխատավարձը վճարել պրոֆդպրոցում սովորելու ժամանակի համար,

4. 40-ժամյա շաբաթը լրիվ վարձատրությամբ:

Պրոֆմիութենական սոցիալ-ֆաշիստները փորձեցին համոզել յերիտասարդությանը համաձայնվել բանակցելու դիրեկցիայի հետ: Բայց համաձայնողականների հորդորները չօգնեցին: Հաջորդ ժողովում յերիտասարդությունը միաձայն վորոշեց գործադուլ հայտարարել: Յեվ բոլոր յերիտասարդ բանվորները կազմակերպված կերպով հեռացան գործարանից, ընտրելով 7 հոգուց բաղկացած գործադուլային կոմիտե, վորը կապ հաստատեց հեղափոխական արհմիութենական օպոզիցիայի հետ, վորն աշխատում է կոմկուսի ղեկավարությամբ: Գործադուլը տևեց մի քանի օր:

Յերիտասարդների գործադուլ կազմակերպվեց նաև Նանտում (Ֆրանսիա): Այստեղ գործադուլ արին մի քանի հարյուր ջահել մետաղագործներ, պահանջելով ավելացնել աշխատավարձը: Լեհաստանում, Սիլեզիայում (Գերմանիա) և Լիտվայում յերիտասարդների գործադուլները հաճախակի յերևույթ են դարձել:

Սակայն յերիտասարդությունը ակտիվ կերպով մասնակցում է բանվոր դասակարգի գործադուլային ընդհանուր պայքարին: Բոլոր դասակարգային խոշոր կռիվներում, վորոնք տեղի յեն ունենում վերջին ժամանակներս կապիտալիստական յերկրներում, ինչպես մետաղագործների և հանքագործների գործադուլը Գերմանիայում, տեքստիլ բանվորների և հանքագործների գործադուլը Ֆրանսիայում, Լեհաստանում, Ամերիկայում — ամենուրեք բանվոր յերիտասարդությունը գտնվում է կռվողների առաջին շարքերում:

Առանձնապես աչքի ընկնող դեր է կատարում աշխատավոր յերիտասարդությունը այնպիսի յերկրներում, ինչպես Հնդկաստանը և Չինաստանը: Հնդկաստանում աշխատավոր յերիտասարդությունը ակտիվ

մասնակցում է 300.000.000-ոց հնդիկ ժողովրդին խեղդող անգլիական իմպերիալիզմի դեմ մղվող պայքարին, և իր հնդկական ֆեոդալների և բուրժուազիայի դեմ, վորոնք իմպերիալիստների հետ միասին, հարստահարում և ճնշում են աշխատավոր մասսաներին: Այժմ Հնդկաստանի հեղափոխական յերիտասարդությունը Բոմբեյում հիմնել է «Բանվոր յերիտասարդության լիգա», վորը ուժեղ պայքար է ծավալում ազգային կոնգրեսի դեմ (հնդիկ բուրժուազիայի կազմակերպությունը, վոր դավաճանում է աշխատավորների շահերը):

Չինաստանում հարյուր հազարավոր ջահել բատրակներ, բանվորներ, չքավորներ ակտիվ կերպով մասնակցում են Կարմիր Բանակի շարքերում, մասնակցում են սովետական օրգանների աշխատանքին խորհրդային շրջաններում: Մի քանի հարյուր հազար ջահել աշխատավոր չինացիներ անդամ են «Յերիտասարդ Գվարդիա» հեղափոխական միության:

## ԿԻՄ-ի ԲԱՆԱԿՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Բանվոր և աշխատավոր յերիտասարդության ճախանալը արտահայտվում է նաև նրանով, վոր այդ յերիտասարդությունը ավելի ու ավելի վճռական կերպով թողնում է բուրժուազիայի շարքերը՝ հեռանում է ֆաշիստական և սոցիալ-ֆաշիստական յերիտասարդական կազմակերպություններից և իր հիմնական մասով անցնում է կոմսոմոլի շարքերը: Հատկապես այդ նկատելի յէ Գերմանիայում և Լեհաստանում: Գերմանիայում, օրինակ, բանվոր յերիտասարդությունը ամբողջ խմբերով, ամբողջ կազմակերպություններով հեռանում է



սոցիալիստական յերիտասարդական միությունից և մտնում է Կոմյերիտմիությունը: Սա հնարավորություն տվեց գերմանական կոմսոմոլին հայտարարել մի լոզունգ—լիկվիդացիայի յենթարկել սոցմոլը (սոցիալիստական յերիտասարդական միություն), վորպես մասսայական կազմակերպություն:

Բանվոր և աշխատավոր յերիտասարդության մասսաները նվաճելու, այդ յերիտասարդությունը հեղափոխական դասակարգային կռվի հիման վրա կազմակերպելու համար մղված պայքարը հենց հանդիսանում է բոլոր կոմյերիտական կազմակերպությունների խնդիրը: ԿԻՄ-ի Գործկոմի 1929 թ. Նոյեմբերյան պլենումում ԿԻՄ-ի ղեկավարությունը Կոմինտերնի օգնությամբ նշեց յերիտասարդության մասսաները նվաճելու կոնկրետ ուղիները և ձևերը:

ԿԻՄ-ի սեկցիաները, պայքարելով իրենց սեփական շարքերում արտահայտված օպորտունիզմի դեմ, թե աջ օպորտունիզմի, վորը կոմսոմոլի համար ներկայացնում է գլխավոր վտանգը, և թե՛ «ձախ» ֆրազների դեմ, վորոնք հանդիսանում են գլխավոր խոչընդոտը մասսաներին նվաճելու ճանապարհի վրա,--ձեռք բերին այդ գործում զգալի արդյունքներ:

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՑ ՔԱՅԼՈՒՄ Է ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՈՄՍՈՄՈԼԸ

Նա կարողացավ վերջին տարվա ընթացքում ծավալել մասսայական լայն աշխատանք բանվոր յերիտասարդության շարքերում: Գերմանական կոմյերիտմիությունը շատ բաներում օգտագործում է խորհրդային կոմյերիտմիության փորձը, սոցիալիստական մրցման

և հարվածայնության ծավալման սատարվում: Մըրցումը և հարվածայնությունը գերմանական կոմսոմոլում ունեն այլ նպատակներ և խնդիրներ, քան ԽՍՀՄ մեջ: Խորհրդային Միության մեջ հարվածայնությունը և սոցիալիստական մրցումը նպատակ ունեն ուժեղացնել սոցիալիզմի շինարարության տեմպերը: Գերմանական կոմսոմոլում այդ մեթոդները օգտագործվում են ուժեղացնելու համար ամբողջ կազմակերպության ակտիվությունը, բարձրացնելու կոմյերիտմիության աշխատանքի տեմպերը, ավելի լավ կազմակերպելու մասսաներին; պայքարելու բուրժուազիայի և նրա ագենտ ֆաշիստների ու սոցիալ-ֆաշիստների դեմ: Գերմանական կոմյերիտմիությունը իր անդամներից կազմել է բազմաթիվ հարվածային բրիգադներ յերկրի բոլոր շրջաններում: Այդ բրիգադները մրցում են իրար հետ: Լավագույն հարվածային բրիգադները պարգևատրվում են կարմիր դրոշներով, գրամեքենաներով, թռուցիկներ տպագրող ապարատներով և այլն: Յուրաքանչյուր ընկեր, յուրաքանչյուր բջիջ ձգտում է գրավել առաջին տեղը, առաջին մրցանակը ելնելու համար:

Վերջին ժամանակներս գերմանական կոմսոմոլը անցկացրեց մի շարք խոշոր ձեռնարկումներ: Առանձնապես հաջող անցան աշխատավոր յերիտասարդության հավաքները, կոնգրեսները և հարվածային յեռամսյակը, վորը նորերս վերջացավ:

Բերենք մի քանի բնորոշ որինակներ հարվածային յեռամսյակն անցկացնելու փորձից: Այդ յեռամսյակը սկսվեց փետրվարի 15-ից մինչև մայիսի 15-ը: Խեմնիցում 25 հազար տեքստիլշչիկներ հանդես յեկան աշխատավարձի իջեցման դեմ: Կոմունիստները և հեղափոխական արհմիութենական ոպոզիցիան գործադուլի կոչ եյին անում բանվորներին: Կապիտալիստները— գործարանատերերը դիմեցին վոստիկանության օգնության, վորը սկսեց ձերբակալել և ծեծել բանվորներին: Կապիտալիստները սկսեցին մասսայաբար արձակել յերիտասարդ և չափահաս հեղափոխական բանվորներին: Գործարաններից մեկի բակում ճաշի դադարի ժամանակ անսպասելիորեն վրա հասավ տեղական կոմյերիտականների բրիգադը: Չնայած վոր գործարանի բոլոր դռները պահպանված եյին վոստիկանների և լրտեսների կողմից՝ հարվածայիններին հաջողվեց մուտք գործել գործարանը: Հարվածային բրիգադը տարավ ագիտացիոն ուժեղ աշխատանք և գրավեց բոլոր բանվորների ուշադրությունը: Հարվածայիններից մեկը կանգնեց պատվանդանի վրա և արտասանեց մի կարճ ճառ, կոչ անելով բանվորներին ի պատասխան աշխատավարձի իջեցնելու փորձին՝ գործադուլ հայտարարել և դադարեցնել աշխատանքը: Բանվորները ճառախոսին դիմավորեցին բուռն ծափահարություններով: Հարվածային բրիգադի անդամները բոլոր ցեխերում բանվորներին բաժանեցին մեծ քանակությամբ գրականություն— թերթեր և ժուռնալներ: Նախքան լրտեսները կարողացան կանչել վոստիկանությանը, կոմյերիտականները չքացան:

Մի այլ որինակ հարվածային բրիգադների աշխատանքից: Նեյկելնի (Բեռլին) ռայոնում կոմյերիտմիությունը անցկացրեց հարվածային որ գործազրկության դեմ պայքարի միջազգային որվա (փետրվարի 25) նախորյակին և աշխատավոր յերիտասարդության համա-

գերմանական առաջին հավաքի առթիվ: Առավոտյան վաղ աշխատանքը սկսելուց առաջ հարվածային կոմյերիտական բրիգադը 20 հոգուց բաղկացած՝ յերեկվաց այն մետաղագործարանում, վորտեղ պետք է տեղի ունենար գործարկումի ընդունելությունը: Հարվածայինները հաջողեցրին բակում կախել մի մեծ պլակատ: Բրիգադի անդամներից մեկը ճառ արտասանեց, կոչ անելով բանվորներին գնալ հեղափոխական ճանապարհով: Գործարանի ցեխերի հարյուրավոր բանվորներ լսում եյին ճառը և ծափահարում ընկերոջը: Գործարանի շեֆերը և պահապանները ուզեցին խանգարել ընկերոջ յելույթը, բայց բանվորները նրա կողմը բռնեցին.

Գործարանային դպրոցի և հանրակացարանի շենքի առաջ նույնպես աշխատանք տանելուց հետո այդ խումբը ուղղվեց դեպի գործազուրկ աղջիկների հանրակացարանը: Ջահել բանվորուհիները խանդավառ ընդունելություն ցույց տվին բրիգադին: Հարվածայինների առաջարկով բանվորուհիները հենց տեղնուտեղը կազմակերպեցին ֆաշիզմի դեմ պայքարող մարտական միության բջիջ:

Կարելի յե բերել ելի մի շարք օրինակներ հարվածային բրիգադների գործունեությունից, սակայն այդ բոլոր օրինակներն էլ խոսում են մի բանի մասին, վոր գերմանական կոմյերիտմիությունը գնում է ուղիղ ճանապարհով մասսաները նվաճելու համար: Բանվոր և գյուղացի յերիտասարդության վրա կոմսոմոլի ազդեցության ուժեղացման մասին, վկայում է վերջերս Բեռլինում կայացած աշխատավոր յերիտասարդության համագերմանական կոնգրեսը: Վորովհետև այդ կոնգրեսը կառավարության կողմից արգելված եր, հարկ



յեղավ անց կացնել գաղտնի, անլեգալ կերպով: Այդ կոնգրեսին ներկա եյին 300 պատգամավորներ յերկրի բոլոր ծայրերից՝ ինչպես և խոշորագույն գործարանների և ֆաբրիկաների ներկայացուցիչները: Բացի կոմյերիտմիության անդամներից, կոնգրեսին մասնակցում եյին շատ անկուսակցական յերիտասարդներ, սոցիալ-ֆաշիստական յերիտասարդության 30 ներկայացուցիչներ և քրիստոնեյական յերիտասարդության 12 անդամներ:

Կոնգրեսում ծավալվեցին աշխույժ վիճաբանություններ, վորոնց մասնակցեցին նաև սոցիալ-ֆաշիստական յերիտասարդության ներկայացուցիչները, վորոնք հայտարարեցին, թե անցնում են կոմյերիտմիության շարքերը և կոչ արին սոց. ֆաշիստական յերիտասարդական միության բոլոր աշխատավոր անդամներին հետևել իրենց օրինակին:

Կոնգրեսում զեկուցեց գերմանական կոմսոմոլի ղեկավար Կուրտ Մյուլլերը: Կոնգրեսում տիրում եր մարտական տրամադրություն և կուռ միահամուռ պատրաստություն: Բոլոր բանաձևերն ընդունվեցին միաձայն, նույնիսկ կոմսոմոլին թշնամի կազմակերպությունների պատվիրակների ձայներով:

Գերմանական կոմյերիտմիությունը աճում է արագ թափով: Այս տարվա ընթացքում կոմյերիտմիության մեջ ներգրավված է 10 հազարից ավելի մարդ: Ստեղծված են 167 նոր խմբեր և 86 նոր բջիջներ արտադրության մեջ: Գերմանական կոմյերիտմիության անդամների ընդհանուր թիվը անցնում է 50 հազարից: Այժմ կոմյերիտմիությունը խնդիր է դրել ձեռք բերել նոր 30 հազար անդամներ:

Հաջողությամբ է ծավալում իր աշխատանքը նաև չեխական կոմյերիտմիությունը: Վերջին կես տարվա ընթացքում Լեհաստանի կոմյերիտմիությունը իր անդամների թիվն ավելացրել է մի քառորդով և այդ չնայած ֆաշիստական վոստիկանության անօրինակ տեռրորին: Պետք է նկատի ունենալ, վոր կոմյերիտմիության պատկանելու համար միմիայն յերիտասարդ բանվորը լեհական օրենքներով դատապարտվում է 4-ից մինչև 8 տարվա տաժանակիր աշխատանքի: Այժմ լեհական բանտերում հեծում են մոտ 4 հազար կոմյերիտականներ: Բայց հակառակ ֆաշիստական արյունալի տեռրորին, բանվոր յերիտասարդության մեջ կոմյերիտմիության ազդեցությունն ուժեղանում է: Այդ մասին վկայում են այնպիսի փաստեր, ինչպես մեծ քանակությամբ նոր բջիջների կազմակերպումը Վարշավայի, Լոձի և այլ քաղաքների գործարաններում և ֆաբրիկաներում: Վերին Սիլեզիայում կոմյերիտմիության անդամների թիվը վերջին ժամանակներս յեռապատկվել է: Մի շարք խոշոր քաղաքներում կոմյերիտմիությունը կազմակերպել է աշխատավոր յերիտասարդության մասսայական կոնֆերանսներ՝ միացյալ ճակատի համար պայքարելու լոզունգով: Լեհաստանի Կոմյերիտմիությունը հաջող պայքար է մղում ազգային-ֆաշիստական և ֆաշիստական յերիտասարդության կազմակերպությունների դեմ: Այսպես, օրինակ, վերջին ժամանակներս «Սարբեկ» ֆաշիստական յերիտասարդական կազմակերպությունը կորցրել եր անդամների յերեք քառորդը:

Նրանցից շատերն անցել են կոմսոմոլի շարքերը:

Թե ֆրանսիական և թե չեխոսլովակյան կոմունիստական յերիտասարդության միությունները ունեցել են մի շարք հաջողություններ: Չեխո-Սլովակիայի կոմյերիտմիությունը կես տարվա ընթացքում կրկնապատկել է իր անդամների թիվը: Այժմ չեխոսլովակյան կոմյերիտմիությունն ունի 8000-ից ավելի անդամ:

Առանձնապես մեծ ակտիվություն ցույց տվեց ֆրանսիական կոմսոմոլը հանքագործների և տեքստիլշչիկների վերջին խոշոր գործադուլների ժամանակ: Ֆրանսիայի հյուսիսում հանքագործների գործադուլի ժամանակ, կոմյերիտմիության մեջ ներգրավվեցին 150 ջահել հանքագործներ:



## ԱՃՈՒՄ ԵՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Առանձնապես խոշոր հաջողություններ ունի Չինաստանի հերոսական կոմսոմոլը: Այժմ նա իր շարքերում ունի 100 հազարից ավելի անդամներ: Զենքը ձեռին, կուսակցության ղեկավարությամբ Չինաստանի կոմյերիտմիությունը այժմ կռվում է իմպերիալիստների և տեղական կալվածատերների դեմ, հանուն Խորհրդային Չինաստանի: Կոմյերիտմիության ղեկավարությամբ աշխատում է վերոհիշյալ մասսայական յերիտասարդական կազմակերպությունը—«Յերիտասարդ գվարդիան» բաղկացած մի քանի հազար անդամներից:

Խոշոր հաջողություններ ունեն նաև Խորհ. Միության հարևան պետությունների—Մոնղոլիայի և Տաննու Տուվայի հեղափոխական յերիտասարդության միությունները: Մոնղոլիայի Ռեվսոմոլը (հեղափոխական յերիտասարդության միություն) վերջին տարվա ընթացքում աճել է 7 հազարից մինչև 20 հազար: Նա ա-

մենատիրով կերպով մասնակցում է յերկրի շինարարությանը: Մոնղոլիայի ռևոլյուցիան մասնակցեց խոշոր անասնատերերի գույքի մի մասի բռնագրավմանը, անասունները հանձնելով կոլտնտեսություններին և չքավորների անտեսություններին: Այժմ նա ակտիվ կերպով մասնակցում է կոլտնտեսական շինարարությանը և Մոնղոլիայի հնգամյա պլանի կատարմանը: Հեղափոխական յերիտասարդության միությունը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում յերկրի կուլտուրական շինարարությանը: Նրանց գյուղերում բոլոր գրագետ հեղյերիտակները վերացնում են անգրագիտությունը: Ռևմոլի աշխատանքում գնալով ավելի լայն են կիրառվում սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը:

Տաննու Տուվայի*) հեղափոխական յերիտասարդության միությունը հաջող կերպով զարգացնում է իր աշխատանքը: Նրա անդամների թիվը 700-ից հասել է 4500-ի:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է ասել, որ ԿԻՄ-ը վերջին ժամանակներս ձեռք է բերել զգալի հաջողություններ: Նրա բանակն այժմ հասնում է (առանց ՀԱՄԼԿՅԵՄ-ի) 220 հազար անդամի, իսկ ՀԱՄԼԿՅԵՄ-ի հետ միասին 4,420 հազար անդամ: Այս միլիոնավոր բանակը անկասկած մեծ դեր է խաղալու համաշխարհային հեղափոխության առաջիկա մարտերում:

---

*) Նախկին Տաննու Տուվա, այժմ կոչվում է Տուվայի ժողովրդական հանրապետություն, սահմանակից է Խ. Միության և Մոնղոլիայի ժողովրդական հանրապետության, կենտրոնական Ասիայի մասում, ունի 58 հազար բնակիչ (1927): Ծանոթ. Թարգ.



ԿԻՄ-ի ջոկատները խորհրդային սահմաններից դուրս առաջիկա Միջազգային Յերիտասարդական Օրը կցուցադրեն իրենց ուժը, զորությունը և պատրաստությունը կռվելու համաշխարհային հեղափոխության հաղթանակի համար: Կոմյերիտական շարքայինների դըրոշների վրա մակագրված լոզունգները առաջին հերթին կոչ կանեն ամբողջ աշխատավոր յերիտասարդությանը և բոլոր աշխատավորներին՝ պաշտպանել համաշխարհային հեղափոխության ամրոցը -Խորհրդային Միությունը:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎԱԿՈԽԵԼ Ե ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ

Խորհրդային Միությունը, որի վրա ուղղված է Արևմուտքի և Արևելքի բոլոր աշխատավորների հայացքը, տարեցտարի, ամիս-ամիս ավելի ու ավելի ամրապնդվում է և դառնում անառիկ ամրոց՝ ի սարսափ համաշխարհային բուրժուազիայի: Ամբողջ աշխարհի ճնշվածների համար Խորհրդային Միությունը հանդիսանում է ուղեցույց աստղ, որ առաջնորդում է նրանց կապիտալի դեմ մղված պայքարում: Լենինյան կուսակցության ղեկավարությամբ Խորհուրդների Յերկիրը հաջողությամբ կատարում է իր հնգամյա պլանը չորս տարում. և արդեն այս տարի հնգամյակի յերրորդ տարում ԽՍՀՄ թևակոխելով սոցիալիզմի շրջանը, ավարտում է սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը: Այս տարի գործի կդրվեն 518 նոր սոցիալիստական ձեռնարկություններ—գործարաններ և ֆաբրիկաներ, տասնյակներով նոր հանքեր, էլեկտրակայաններ, 1040 մեքենատրակտորային կայաններ: Այս տար-

վա ընթացքում կաշխատեցվեն այնպիսի հսկայական գործարաններ, ինչպես Խարկովի տրակտորի գործարանը, վորը տարեկան բաց ե թողնելու 40 հազար տրակտոր, Սարատովի կոմբայնի գործարանը, աշխարհի ամենախոշոր մետաղագործարանի՝ Մագնիտոգորսկի միշարք հնոցները, Կուզնեցկի գործարանի մի շարք հնոցները, 33 ելեկտրոկայաններ, 13 խոշոր ածխահանքեր և այլն, և այլն: Արտադրանքի ընդհանուր աճումը կբարձրանա գրեթե 50 տոկոսով համեմատած 1930 թ. հետ: Մոտ յերկու միլիոն նոր բանվորների պահանջ կզգացվի ժողովրդական տնտեսության համար: 1931 թ. պլանով նախատեսված եր կոլեկտիվացնել ամբողջ Միության մեջ միջին հաշվով կեսից վոչ պակաս, իսկ հիմնական հացահատիկային շրջաններում՝ 80 տոկոսով: Գարնանացանի պլանը վորոշված եր 100 միլիոն հեկտար ցանքային մշակույթներ: Մենք հնգամյակը կատարում ենք չորս տարում: Հնգամյակի յերրորդ տարվա անցած կես տարին ցույց ե տալիս, վոր խորհուրդների յերկիրը հասել ե խոշոր հաջողությունների 1931 թ. պլանը կատարելու ասպարեզում: Արդեն այս տարի գարնանը կոլտնտեսությունների մեջ մտավ գյուղացիական տնտեսությունների ավելի քան կեսը: Հիմնական հացահատիկային շրջաններում (Հյուսիսային Կովկաս, Ուրալի դաշտավայր, Ստորին Վոլգա, Միջին Վոլգա) կոլտնտեսություններն արդեն միացնում են բոլոր չքավոր-միջակ տնտեսությունների 80 տոկոսից ավելին: Հուլիս ամսում ԽՍՀՄ կոլտնտեսությունների մեջ միացել եյին մոտ 13 միլիոն գյուղացիական տնտեսություններ: Այսպիսով գյուղատնտեսության



սոցիալիստական մասը (սեկտորը) գերազանցեց անհատական սեկտորին:

Առանձնապես խոշոր հաջողությունների հասանք գարնանացանի ժամանակ: Մեքենատրակտորային կայանները գերակատարեցին իրենց պլանը 2 միլիոն հեկտարով: Իրենց պլանը գերակատարեցին նաև խորհտնտեսությունները: Կոլտնտեսությունները նույնպես մեծ յեռանդով անց կացրին գարնանացանը: Մինչև հունիսի 10-ը 200 հազար կոլտնտեսություններ, վորոնք միացնում են 13 միլիոն տնտեսություն, ցանեցին մոտ 57 միլիոն հեկտար: Մինչդեռ 12 միլիոն անհատական տնտեսություններ ցանել են միայն 26 միլիոն հեկտար: Այսպիսով, կոլտնտեսությունների ցանքերը յերկու անգամից ավելի գերազանցում են անհատականների ցանքերը: Սա վկայում ե, վոր այժմ գյուղատնտեսության մեջ կենտրոնական դեմքը դարձել ե կոլտնտեսական գյուղացիությունը: Համատարած կոլեկտիվացման այս հաջողությունների վրա հենվելով կուսակցությունը և կառավարությունը կոլտնտեսական և չքավոր-միջակ մասսաների օգնությամբ հաջող կերպով անց են կացնում կուլակ-շահագործողների դասակարգի լիկվիդացիան:

## ՄԵՆՔ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆՔ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ

Մեկը մյուսի հետևից հաղթանակներ են տարվում հնգամյա պլանը ժամկետից առաջ կատարելու համար մղված պայքարում: Մի շարք ամենախոշոր գործարաններ, ինչպես Մոսկվայի ելեկտրագործարանը, Լենինգրադի Կարլ Մարքսի անվան մեքենաշինարարական գործարանը և շատ ուրիշ գործարաններ վերջացրել են

իրենց հնգամյակը: Իր հնգամյակը ավարտեց նաև Նավթարդյունաբերությունը: Հոկտեմբերյան Հեղափոխության տարեդարձին իր հնգամյակն ավարտում է նաև էլեկտրաարդյունաբերությունը: Հնգամյակի յերրորդ տարվա վերջերին իրենց հնգամյա պլանը կկատարեն արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերը:

Այս վիթխարի հաջողությունները մենք ձեռք ենք բերել բոլշևիկյան կուսակցության լենինյան ճիշտ գծի կիրառման հիման վրա: Մենք հասանք այս հաջողությունների, վորովհետև կուսակցությունը վճռականորեն պայքարեց ոպորտունիզմի բոլոր արտահայտությունների դեմ; թե՛ աջ ոպորտունիզմի, վոր գլխավոր վտանգն է ներկայումս և թե՛ «ձախ» ոպորտունիզմի: Սոցիալիզմի շինարարության գործում այս հաջողությունները մենք ձեռք բերինք շնորհիվ բանվոր դասակարգի, կոլտնտեսականների, չքավորների և միջակների լայն մասսաների աշխատանքային խանդավառության հզոր վերելքի: Սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը, վորոնց նախաձեռնողը յեղավ լենինյան կոմսոմոլը, այժմ վերածվել են մասսայական հզոր շարժման. միլիոնավոր բանվորներ և կոլտնտեսականներ մտել են սոցիալիստական մրցման, հայտարարել են իրենց հարվածային, նպատակ դնելով կատարել հնգամյակը չորս տարում:

Մեր հաջողությունները առանց դժվարությունների ձեռք չեն բերվում: Բայց դժվարությունները մեզ չեն վախեցնում: Մենք շատ լավ գիտենք, վոր այդ դժվարությունները—նյութեղենի, հագուստի, կոշիկի, մսի պակասը, այնպիսի դժվարություններ չեն, վորոնք ա-



ռաջ են յեկել մեր տնտեսության վատացումից կամ թուլացումից, ճիշտ ընդհակառակը: Այդ դժվարությունները առաջ են յեկել մեր մշտական և արագ աճման, մեր սոցիալիստական տնտեսության ամրապնդման և աճման հետևանքով: Եվ միայն մեր առաջխաղացումով, սոցշինարարության արագ տեմպերի ծավալումով մենք կկարողանանք հաղթել և կհաղթենք այդ դժվարությունները:

## ԼՐԻՎ ԿԱՏԱՐԵԼ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՊԼԱՆԸ

Հնգամյակի և յերրորդ վճռական տարվա պլանի կատարման գործում ձեռք բերված խոշորագույն նվաճումների հետ միասին, առաջին կիսամյակի արդյունքները վկայում են, վոր արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերում մեզ մոտ կան խոշոր ճեղքվածքներ. ածխի և մետաղի արդյունաբերությունը, շինարարական նյութերի արտադրությունը թերակատարում են նախագծված պլանները և հետ են մնում սոցիալիստական շինարարության ընդհանուր արագ տեմպերից: Դոնբասի, Ուրալի, Կուզնեցկի ավազանի հանքերը ներկայումս մեծ պարտք ունեն յերկրին: Միայն Դոնբասը 1931 թ. առաջին յերեք ամիսներին յերկրին պակաս է տվել մոտ չորս ու կես միլիոն տոնն ածուխ: Այս ճեղքվածքների հիմնական պատճառներ կայանում են նրանում, վոր մեր ստորին կազմակերպությունները դեռևս չեն սովորել ինչպես հարկն է ղեկավարել աշխատանքը նոր պայմաններում, յերբ պահանջվում է ավելի մեծ ճկունություն և գործի կոնկրետ և խոր ծանոթություն:

## «ՀԱՍՆԵԼ ՅԵՎ ԱՆՑՆԵԼ»—ԳԼԽԱՎՈՐ ԼՈԶՈՒՆԳԸ

Բոլշևիկյան կուսակցության կողմից դրված խնդիրը, որ ընկ. Ստալինն արտահայտել է հետևյալ լոզունգով. «Առաջիկա տասը տարում հասնել և անցնել տեխնիկապես և տնտեսապես առաջավոր կապիտալիստական յերկրներից»—իրավունք չի տալիս մեզ մի րոպե անգամ թուլացնել մեր սոցիալիստական շինարարության տեմպերը: Այդ խնդիրը պահանջում է մեզանից անդուլ, համառ աշխատանք, պահանջում է մեզանից շուտափույթ վերացնել յեղած ճեղքվածքները, պահանջում է մեզանից, վերջապես, ել ավելի ուժեղացնել աշխատանքի տեմպերը:

Դրա համար, «հասնել և անցնել» լոզունգը լինելու յե մեր հիմնական և ամենագլխավոր նշանաբանը, որով լենինյան կոմսոմոլը մոտենում է 17-րդ Միջազգային Յերիտասարդական Որվան—կոմյերիտմիության և աշխատավոր յերիտասարդության բոլոր ուժերը լարում այդ խնդրի իրագործմանը՝ հասնել և անցնել կապիտալիստական յերկրներից:

Փոխադրելով այդ մեր առօրյա կյանքի լեզվին՝ դա նշանակում է, որ մենք մեր բոլոր ուժերը, մեր յերիտասարդական կոմյերիտական ամբողջ յեռանդը պետք է տանք իրագործելու տնտեսական շինարարության բոլոր պլանները: Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է տասնապատկել իր ջանքերը այն ճակատամասում, որտեղ նա աշխատում է: Յուրաքանչյուր կոմյերիտական, յուրաքանչյուր յերիտասարդ բանվոր, որտեղ ել որ նա աշխատելիս լինի—շինարարության վրա, գործարանում—պետք է լինի իսկական հեղափոխական, գիտակցելով, որ իր դրած յուրաքանչյուր ավելորդ աղյուսը,



բետոնի յուրաքանչյուր լրացուցիչ ծեփը ( замес ) արագացնում է սոցիալիստական շինարարության տեմպերը: Յուրաքանչյուր կոմյերիտական կառուցող պետք է իմանա, որ ինքը զինվոր է հեղափոխական բանակի, որը կռվում է այս տարի սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումն ավարտելու համար:

Յուրաքանչյուր կոմյերիտական ոչ միայն ինքը պետք է մտնի հարվածային բրիգադ, այլ և պետք է այդ բրիգադում ներգրավի բոլոր յերիտասարդ և հասակավոր բանվորներին:

Յուրաքանչյուր կոմյերիտական, կառուցող պետք է ինքը տիրապետի տեխնիկային և ոգնի յուրաքանչյուր յերիտասարդ բանվորին տիրապետել տեխնիկային:

Ոչ պակաս մեծ են նաև այն կոմյերիտականների անելիքները, որոնք աշխատում են նորակառույց ձեռնարկություններում, տրանսպորտում, հանքերում: Նրանց համար «հասնելու և անցնելու» խնդիրը կայանում է նրանում, որ նրանք պետք է բոլշևիկորեն կռվեն հնգամյակի յերրորդ տարվա պլանը կատարելու և գերակատարելու համար: Պատրաստվելով 17-րդ Միջազգային Յերիտասարդական Որվան, մենք պետք է ցեխում, բրիգադում, կազմակերպության մեջ, հանքում ամենալայն կերպով ծավալենք բոլոր բանվորներին սոցիալիստական մրցման մեջ ընդգրկելու աշխատանքը: Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է որինակ ցույց տա նոր տեխնիկային տիրապետելու, ներգործարանային պլանավորմանը տիրապետելու գործում: 17-րդ Միջազգային Յերիտասարդական Որը չպետք է լինի ոչ մի կոմյերիտական տեխնիկական ուսուցումից, հարվածային բրիգադներից դուրս:

# ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՅԵՎ ՄԹԵՐՈՒՄԸ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Առանձնապես մեծ և պատասխանատու յեն գյուղի կոմյերիտականների անելիքները։ ՄՅՈՒԴ-ի (Միջազգային Յերիտասարդական Որ) տոնակատարությունը զուգադիպում է մի քանի խոշորագույն աշխատանքների —բերքի և գլխավորապես տեխնիկական մշակույթների հավաքման աշխատանքների ավարտումը և հացի ու այլ մթերումները։

Գյուղի կոմյերիտմիությունը գարնանացանի կամպանիայի ժամանակ ցույց տվեց հերոսական աշխատանքի բազմաթիվ որինակներ։ Կոմյերիտական հարվածայինները ցանքի առաջին շարքերում եյին կոլխոզների և խորհտնտեսությունների մեջ։ Սակայն ցանքի պլանի կատարումով չի վերջանում հացի և գյուղատնտեսական հումքի—բամբակի, վուշի և այլնի համար մղված պայքարը։ Յուրաքանչյուր գյուղացի շատ լավ գիտե, վոր ավելի հեշտ է ցանել, քան ցանածը պահպանել և հավաքելը։ Հատկապես դժվար է տեխնիկական մշակույթների բերքահավաքը, վորոնք ամենից ավելի տարածված են ազգային ռայոններում։

Բերքահավաքին ակտիվ կերպով մասնակցելու համար յուրաքանչյուր կոմյերիտական իր բջիջի հետ միասին լծվում է բերքի պահպանման համամիութենական կամպանիային, վորը հայտարարված է կոմսոմոլի Կենտրոնական Կոմիտեյի կողմից։ Ցույց տալ հարվածային աշխատանքի որինակ, անձնական որինակով կազմակերպել մյուսներին բերքի շուտափույթ հավաքման գործում, բոլոր ուժերով ոգնել բջիջին և կոլխոզին կազմակերպելու և դասավորելու ուժերը բերքահավաքի ժամանակ—ահա՛ յուրաքանչյուր կոմյերիտականի առաջնակարգ մարտական խնդիրները։



Այս տարի դաշտերում բերքահավաքի ժամանակ, կլինեն տասնյակ հազարավոր մեքենաներ։ Լրիվ ոգտագործել բոլոր մեքենաները, թույլ չտալ վոչ մի բոպե պարապ կանգնել—ահա յուրաքանչյուր կոմյերիտականի յերկրորդ կարեվորագույն անելիքը բերքահավաքի ժամանակ։ Թվով յերրորդը, բայց իր նշանակությամբ առաջին խնդիրն է պայքարը գործավարձի և հաշվառման համար կոլտնտեսությունների աշխատանքներում։ Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է ոգնի կոլտնտեսության վարչությանը կամ բրիգադիրին՝ սահմանել արտադրանքի ճիշտ նորմաներ, բարձրացնել սեփական աշխատանքի վորակն ու քանակը, պայքարել աշխորերի ճիշտ և լրիվ հաշվառման համար։ Ամեն մի կոմյերիտական դրա հետ միասին պետք է թույլ տա, վոր հասակավորների հետ հավասար աշխատող անչափահաս կոլտնտեսականները պակաս ստանան։ Կոմյերիտականները պետք է հետևեն, վոր յուրաքանչյուր կոլտնտեսականը ստանա իր աշխատանքային գրքույկը և այնտեղ նշանակվեն աշխորերը, ոգնելով բրիգադիրներին և հաշվառում կատարողներին ամեն որ հաշվել և գրանցել կատարված աշխատանքը։

Ուզբեկստանի կոմսոմոլը անցյալ տարվանից արդեն ունի բամբակի բերքահավաքի հիանալի փորձ։ Ոգտագործել այդ փորձը, խուսափելով անցյալում յեղած թերություններից, հանդիսանում է բոլոր բամբակամշակ ռայոնների խնդիրը։ Այդ փորձի մասին կա հատուկ մի բրոշյուր, վորը վերջերս լույս է տեսել «Մոլոդայա

Գվարդիայի» հրատարակությամբ «Ուզբեկստանի կոմսոմոլը բամբակի ֆրոնտում» վերնագրով։ Բերքահավաքի վրա աշխատանքը պետք է ընթանա հետևյալ լոզունգով—վոչ մի կիլոգրամ հացահատիկ և տեխնիկական մշակույթ չպետք է մնա դաշտում։

Բերքահավաքի հետ սերտ կապ ունեն հացի և այլ մշակույթների մթերումները։ Անհրաժեշտ է ընդգծել, վոր այս տարվանից հացամթերումները տեղի կունենան այլ պայմաններում, քան անցյալ տարի։ Մենք արդեն վերևում ցույց տվինք, վոր գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը գերազանցել է անհատական սեկտորը։ Այս տարի ապրանքային հացի 70 տոկոսից ավելին տալու յեն պետությանը կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները, մինչդեռ անցյալ տարի սոցիալիստական սեկտորը հանձնեց միայն 40 տոկոս։

Այսպիսով գլխավոր հաց տվողը լինելու յեն գյուղի համայնացված սոցիալիստական սեկտորը, վորը անկասկած բարենպաստ ազդեցություն կգործի հացամթերումների վրա։ Բայց սա բնավ չի նշանակում, վոր հացամթերումների ժամանակ մենք դժվարություններ չենք ունենա և չենք հանդիպի դասակարգային թշնամիների դիմադրության։ Յուրաքանչյուր կոմյերիտականի պարտականությունն է մերկացնել դասակարգային թշնամու — կուլակի դավերը, ոգնել կուսակցությանը հաղթահարելու խոչընդոտները հացամթերումների գործում։

Միջազգային Յերիտասարդական Օրվա պատրաստության և տոնակատարության կապակցությամբ կոմյերիտականներին ամենուրեք պետք է առաջադրեն մթերումների հանդիպական պլաններ և մոբիլիզացիայի



յենթարկեն մասսաները կատարելու և գերակատարելու այդ պլանները։ Մթերման կամպանիայի նշանակության մասին տարված բացատրական աշխատանքը պետք է սերտորեն կապել ՄՅՕԻԴ-ի պատրաստության հետ

Մեքենատրակտորային կայանում աշխատող կոմյերիտականը պետք է լինի ՄՏԿ-ի առաջին ոգնականը ապրանքային ավելցուկները պետությանը հանձնելու գործում։ Գյուղի յուրաքանչյուր կոմյերիտականը պետք է իր բջիջի հետ միասին անց կացնի կոնտրակտացիոն պայմանագրերի ստուգում, աշխատելով վոր կոլտնտեսությունները և հատկապես անհատականները լրիվին և ժամկետից առաջ կատարեն այդ պայմանագրերը։ Այս ամբողջ աշխատանքում, ինչպես և առհասարակ կոմսոմոլի ամբողջ աշխատանքում չի կարելի աչքից բաց թողնել չքավոր և միջակ անհատականների մեջ տարվելիք աշխատանքը։ Ոպորտունիստ է այն կոմյերիտականը, վորը որը որին չի աշխատի յերիտասարդ չքավորի և միջակի հետ, գործով չի ապացուցի նրանց կոլխոզային տնտեսության ոգուտները, չի աշխատի նրանց ներգրավել կոլտնտեսության մեջ։

Հացամթերումների ժամանակ նույնպես անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել անհատական տնտեսություններին։ Պետք է պայքարել, վորպեսզի անհատական տնտեսությունների հանձնածի նորմաները պակաս չլինեն կոլտնտեսականների նորմաներից, պետք է պայքարել, վորպեսզի ժամկետից առաջ կատարվի անհատականների պլանը, պետք է պայքարել, վորպեսզի անհատական տնտեսության հացը չգնա սպեկուլյացիայի շուկան։ Յուրաքանչյուր կոմյերիտական պետք

և ամեն կերպ ոգնի հացամթերումների գյուղական հանձնաժողովների աշխատանքին, հանդիսանա առաջամարտիկ սոցիալիստական մրցման հարվածայնության հացամթերումների ասպարեզում։

Վոչ մի դեպքում չպետք է մոռանալ, վոր կուլակը դեռևս վերջնականապես վերացված չէ, վոր նա բոլոր ուժերով կռվելու յե մթերումների պլանների կատարման դեմ։ Վճռական կերպով պայքարել կուլակի և նրա գործակալների՝ աջ ոպորտունիստների և «ձախ» խոտորումների դեմ, վորոնք ջուր են ածում աջերի ջրաղացին—պայքարել, վորպեսզի կուլակային տնտեսությունները ժամանակին և լրիվ կատարեն ամուր առաջադրանքները,—հանդիսանում է հիմնական խնդիրներից մեկը։ Պետք է հիշել, վոր այս յերկու հիմնական տնտեսական կամպանիաներից բերքահավաքից և մթերումից է կախված մեծ չափով յերրորդ վճռական տարվա ընդհանուր պլանի կատարումը, վորը կոչված է խոշոր դեր խաղալու «կապիտալիստական յերկրներին հասնելու և անցնելու» լոզունգի իրագործման մեջ, այսինքն՝ այն կենտրոնական, հիմնական լոզունգի, վորով մենք ցույցի դուրս կգանք սեպտեմբերի 6-ին, Միջազգային Յերիտասարդական Որը։

## ԱՌԱՋ, ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԲԱԶՄԱՄԻԼԻՈՆ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բոլշևիկյան կուսակցության կողմից լենինյան կոմյերիտմիության առաջ դրված խնդիրներն ավելի լավ ու ավելի լրիվ իրագործելու, սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում կոմյերիտմիության աշխատանքը բարձր աստիճանի վրա դնելու, նրա շարքերը վորակապես ամրացնելու և նրա պրոլետարա-



ն կորիզն ավելացնելու համար կոմյերիտմիության
համագումարը ՀամԼԿՅԵՄ-ը բազմամիլիոն կազմա-
րպություն դարձնելու մարտական խնդիրն առաջա-
եց միությանը։

Կոմյերիտմիությունը վճռականապես ձեռնարկեց
համագումարի այս դիրեկտիվի կատարմանը և այդ
րծում խոշոր նվաճումներ ձեռք բերեց։ Համագու-
րից հետո անցած կես տարվա ընթացքում, մինչև
մ. ԼԿՅԵՄ Կենտկոմի 2-րդ պլենումը, անհատական
արությամբ միության մեջ ներգրավվեց 1.200 հազար
դի։ Այսպիսով կոմյերիտմիությունը 3 միլիոնանոց
զմակերպությունից դարձավ 4 միլիոն անդամ ընդ-
րկող մի կազմակերպություն։

Բանվորական, բատրակային և առաջավոր կոլ-
նտեսական յերիտասարդության այս վիթխարի հո-
նքը դեպի կոմյերիտմիության շարքերը պատահական
րևույթ չէ։ Դա անմիջապես արդյունք է այն բանի,
ր աշխատավորական ամենալայն մասսաների մեջ ա-
լ է մեր կուսակցության և կոմյերիտմիության հեղի-
ակությունը։

Կոմյերիտմիության այս աճումը անմիջապես ար-
յունք է այն բանի, վոր սիստեմատիկ կերպով բարձ-
ացել է միության և նրա ամենօրյա գործունեության
րը սոցիալիստական շինարարության մեջ։

Միության այս աճումը ապացույց է այն վիթխարի
տման, վորպիսին ունի բանվորական, բատրակային
առաջավոր կոլտնտեսական յերիտասարդությունը
եպի լենինյան կոմյերիտմիությունը, դեպի սոցիա-
իստական շինարարության ֆրոնտի ակտիվ պայքարը։

Կոմյերիտմիությունը բազմամիլիոն կազմակերպու-
յան վերածելու աշխատանքը ճիշտ և բոլշևիկորեն
ազմակերպելը յուրաքանչյուր կոմիտեյի, յուրաքան-

չյուր բջիջի կարևորագույն խնդիրն է հանդիսանում:

Անհրաժեշտ է հաստատ հիշել, առաջին, վոր բանվորական, բատրակային և առաջավոր կոլտնտեսական յերիտասարդության կոմյերիտմիության մեջ ներգրավելու ամբողջ աշխատանքը պետք է ընթանա միմիայն անհատական ընտրության կատարելու հիմունքով, և վոչ թե բոլոր դիմողներին գլխովին ընդունելով: Յերկրորդ. բազմամիլիոն կոմյերիտմիության համար պայքարելիս միանգամայն անհրաժեշտ է ներգրավման թվական մասնագրումներ կատարել: Յեվ, վերջապես, հավաքագրման ամբողջ աշխատանքը սերտորեն պետք է շաղկապել բոլոր նոր ընդունված կոմյերիտականներին սոցիալիստական շինարարության տեմպերի բարձրացման, հընգամյակի չորրորդ տարվա պլանների իրագործման և բերքահավաքի ու մթերումների աշխատանքի կատարման համար ակտիվ պայքարելու խնդրին:

Մի շարք տեղերում կոմյերիտական կազմակերպությունները անուշադրության մատնեցին բազմամիլիոն կոմյերիտմիության համար մղվող պայքարի ճիշտ կազմակերպման այս հիմնական պայմանները և թույլ տըվին խոշոր սխալներ, այն է՝ անխտիր ընդունելություններ կատարեցին, վորոշակի թվական մասնագրումներ սահմանեցին, թե յուրաքանչյուր կազմակերպություն, յուրաքանչյուր բջիջ ինչքան նոր անդամ պետք է ներգրավի ու ինչքան ժամանակում, և, վերջապես, քիչ բան արին նոր ընդունված կոմյերիտականների գործնական աշխատանքի ամրացնելու ուղղությամբ: Կասկածից դուրս է, վոր միության աճման քաղաքականության այսպիսի խոտորումներն ու խեղաթյուրումներն ամենևին չեն նպաստում բազմամիլիոն կոմյերիտմիության մասին Համ. ԼԿՅԵՄ-ի IX համագումարի տված լոզունգի իրագործմանը և խանգարում են նրան:



Ուստի, միանգամայն ճիշտ վարվեց մեր միության կենտրոնական կոմիտեն, յերբ նա վճռաբար դատապարտեց այս խեղաթյուրումները և առաջարկեց բոլոր կոմիտեներին ու բջիջներին—«ամեն կերպ ուժեղացնել մասսայական աշխատանքը, ապահովելով միության ամբողջ աճումը բանվորական, բատրակային ու առաջավոր կոլտնտեսական յերիտասարդության հաշվին, յուրաքանչյուր խորհտնտեսության և կոլտնտեսության կից բջիջ ստեղծել, վճռաբար թույլ չտալով միության աճման գործի խոտորումներ և խեղաթյուրումներ, հաստատ հիշելով, վոր խնդիրը քանակը չէ միայն, այլև գլխավորապես վորակը»:

Կենտրոնական կոմիտեյի այս դիրեկտիվը հիմք պետք է ծառայի 17-րդ ՄՅՈՒԴ-ի առթիվ կոմյերիտմիության մեջ նոր անդամներ ներգրավելու մեր վողջ աշխատանքի համար:

Կատարելով ԿԿ-ի այս միանգամայն ճիշտ ցուցմունքը, յուրաքանչյուր կոմյերիտական պետք է վճռական պայքարի բոլոր նրանց դեմ, վորոնք կփորձեն աճման գործի խոտորումների ու խեղաթյուրումների դեմ մղվող պայքարն օգտագործել աճման ինքնահոսի աջ ոպորտունիստական թեորիան կենսագործելու համար, բոլոր նրանց դեմ, վորոնք կփորձեն կասկածի տակ դնել X համագումարի տված լոզունգը՝ կոմյերիտմիությունը բազմամիլիոն կազմակերպության վերածելու մասին:

Հաստատ հիշելով, վոր խնդիրը ներգրավելիք անդամների քանակը չէ միայն, այլ գլխավորապես վորակը, յուրաքանչյուր կոմյերիտական բջիջ պետք է վճռաբար ու արագորեն հաղթահարի կոմյերիտմիության աճման պրակտիկայում հայտաբերվող ամեն մի խեղաթյուրումը և բոլշևիկորեն շարունակի պայքարը

բազմամիլիոն կոմյերիտմիության մասին IX համագումարի տված լոզունգն իրագործելու համար:

## ՄՑՈՒԴԸ ԱԶԳ. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՈՐ՞Ն Է

Միջազգային Երիտասարդական օրը հանդիսանում է և հանդիսանալու է առաջին հերթին ազգային ռայոններում, մարզերում և հանրապետություններում ազգային-կուլտուրական շինարարության ֆրոնտում կոմսոմոլի տարած աշխատանքի ստուգման օրը: Ցարական կառավարությունը զենքի ուժով էր պահում իր իշխանությունը այսպես կոչված ազգային ծայրերկրներում և նրան ձեռնտու էր տգիտության և խավարի, կրոնական նախապաշարումների մեջ թողնել այդ ազգությունների աշխատավոր մասսաներին: Ցարական Ռուսաստանը բոլոր միջոցներով աշխատում էր թույլ չտալ, որ ազգային շրջաններում զարգանան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը, դրա համար էլ այդ ժողովուրդները քարշ էին տալիս իրենց գոյությունը, մնալով տգիտության, խավարի, անկուլտուրականության և աղքատության մեջ:

Խորհրդային իշխանությունը, պրոլետարիատի դիկտատուրան արմատապես փոխեց այդ քաղաքականությունը, որովհետև պրոլետարիատի դրած խնդիրները հանդիսանում են մեր մեծ միության բոլոր աշխատավորների խնդիրները: Երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացումը, բարձր տեխնիկայի արմատացումը գյուղատնտեսության մեջ— այս ամենը փոխեց ազգային շրջանների թե՛ արտաքին տեսքը և թե՛ ներքին բովանդակությունը: Մեզանում չտեսնված թափով տնտեսապես և քաղաքականապես բարգավաճում են ազգային հանրապետությունները, մարզերը և շրջանները: Մեր կուսակցությունը և կառավարությունը միջոցներ են ձեռք առնում, յերկրի ինդուստրացման ընթացքում ինդուստրացման ամենաբարձր տեմպերը զարգացնել հենց ազգային հանրապետություններում և մարզերում, որպեսզի հնարավորություն տան նրանց հասնելու Միության արդյունաբերական տեսակետից ավելի զարգացած կենտրոնական շրջաններին: Կառուցվում են նոր ֆաբրիկաներ և գործարաններ: Ամենախոշոր գործոնը, որը առանձնապես ցայտուն կերպով ցույց է տալիս ազգ. հանրապետությունների տեխնիկական բազայի աճումը— հանդիսանում է Թուրքսիբի (Թուրքեստան-Սիբիր յերկաթուղագիծը) կառուցումը: Կառուցվում են նոր էլեկտրոկայաններ: Ստեղծվում են ընդհարձակ ոռոգման սիստեմներ, որոնք նպաստում են հողագործության զարգացմանը:

Խորհրդային իշխանության այս ամբողջ քաղաքականությունը, այս վիթխարի շինարարությունը ստեղծում է հիանալի պայմաններ ազգությունների կուլտուրայի պատմության մեջ չտեսնված ծաղկման համար: Ազգային կուլտուրական շինարարությունն այժմ առաջ է գնում հսկայական քայլերով: Արագ թափով աճում են ազգությունների գրականությունը, արվեստը, թատրոնը: Գրագետ ազգաբնակության տոկոսը օրինակ Միջին Ասիայում մինչև 1917 թ. գրեթե հավասար է զերոյի, իսկ այժմ հասնում է 40 տոկոսի: Ստեղծվում է ազգային նոր այբուբեն, կառուցվում են մեծ թվով նոր դպրոցներ:

## ՈՐԻՆԱԿ ՎԵՐՑՐԵՔ ԱԴԻԳԵՑԻՑ

Չնայած այս պատմական խոշորագույն նվաճումներին, կուլտուրայի զարգացման տեմպերի ընդհանուր կացությունը ազգ. հանրապետություններում դեռևս հետ է մնում սոցիալիստական շինարարության տեմպերից: Սա առաջին հերթին վերաբերում է անգրագիտության վերացման և ընդհանուր ուսուցման—կուլտուրական հեղափոխության այդ վճռական օղակների— հարցերին:

Կան դեռևս շատ հետամնաց շրջաններ, օրինակ Չեչենների ինքնավար շրջանում գրագետների տոկոսն է միայն 5: Շատ վատ է այդ գործի դրությունը նաև Հյուսիսային յերկրի ժողովուրդների մեջ: Սակայն սխալ կլիներ պատկերացնել, թե բոլոր ազգային մարզերում և հանրապետություններում մենք ունենք այնպիսի դրություն, ինչպես դիցուք Չեչնիայում: Հիանալի աշխատանքի մի օրինակ, վորի փորձով պետք է սովորեն շատ շրջաններ, հանդիսանում է անգրագիտության վերացման աշխատանքը Ադիղեյի փոքր ինքնավար մարզում: Գյուղատնտեսության կոլեկտիվացման խոշոր աջողությունների հիման վրա (այժմ Ադիղեյը կոլեկտիվացված է գրեթե 100 տոկոսով) 1930 թ. Ադիղեյում սկսվեց արշավ գրագիտության և կուլտուրայի համար: 1930 թվի սեպտեմբերին շրջանում հաշվառման յենթարկվեցին 18480 անգրագետներ և 400 կիսագրագետներ: Նոյեմբերի 7-ին աուլներում հայտարարվեց կուլտ եստաֆետի սկսվելը: Այդ աշխատանքի ավարտումը ծրագրված եր հունվարի 21-ին— լենինյան օրերին: Յեթե լենինյան օրերին ամփոփվեցին աշխատանքի արդյունքները, պարզվեց վոր շրջանի բոլոր անգրագետները վե-



րացրել են իրենց անգրագիտությունը: Արդեն մինչև լենինյան օրերը չեկկայանների կեսը վերջացրել եր այբենարանը: Հունվարի 21-ին հայտարարվեց յերկրորդ կուլտեստաֆետ— մինչև ապրիլի 1-ը: Այս եստաֆետի նպատակն եր ամրապնդել գրագիտությունը, լայն ծավալել ավելի բարձր կրթության աշխատանքը: 100 տոկոսով գրագետ ազգաբնակության այնպիսի մի շրջանում, վորտեղ դեռևս 1920 թ. կար միայն 6 տոկոս գրագետ: Սա կարող է կատարվել միայն այնտեղ, ուր իրենք մասսաները շարժման մեջ են դրվում, վորտեղ յուրաքանչյուր աշխատավոր ինքը ակտիվ կերպով մասնակցում է կուլտուրական հեղափոխությանը:

Անկասկած Ադիղեյի կոմսոմոլը իր ուսերի վրա յե տարել աշխատանքի մեծ բաժինը: Կոմյերիտական ամբողջ կազմակերպությունը լրիվին մոբիլիզացիայի յե յենթարկված յեղել անգրագիտության վերացման աշխատանքի համար: Յուրաքանչյուր գրագետ կոմյերիտական սովորեցրել է 2-3 և ավելի անգրագետի: Անգրագիտության վերացման մասնակցելը հանդիսացավ Ադիղեյի յուրաքանչյուր կոմյերիտականի պատիվ և հերոսության գործը:

Նույնիսկ Ադիղեյի ամենահետամնաց աշխատավորները— չերքեզ կանայք, վորոնք մինչև վերջին ժամանակներս գտնվում եյին ստրկական վիճակում, հասկացան, վոր միայն խորհրդային որով նրանց համար յեկել է ազգային-կուլտուրական զարգացման ժամանակը: Ահա թե ինչ եր հայտարարում իր անգրագիտությունը նոր վերացրած չերքեզուհի Այդարակովան անգրագիտության վերացման դպրոցի ավարտմանը նվիրված ժողովում: —«Անիծյալ ցարը չերքեզներին քշել եր ճահիճները, վորպեսզի մեր մարդիկը և զավակնե-



17-րդ Մ.Ի.Չ. յերիտ որ—3

րը փոչնչանային վարակիչ մոծակներից։ Մենք, մեր հայրերը և յեղբայրները, ցարի դեմ կռվեցինք 120 տարի։ Մեր թիվը խիստ պակասել եր։ Միայն խորհրդային իշխանությունը ազատություն տվեց մեզ և բացեց մեր աչքերը։ Չերքեզուհին գնում է սովորելու, չերքեզուհին այլևս ստրուկ չի լինի։ Կեցցե՛ Լենինի կուսակցությունը»։

Անգրագիտության վերացման աշխատանքի օրինակ կարող է լինել Կալմիկների ինքնավար շրջանը։ Այստեղ 1929–30 թ. շնորհիվ նոր ձևերի, մասսայական աշխատանքի ձևերի վերացված է 22 հազար հոգու անգրագիտությունը։ Անգրագիտության վերացման արշավը կալմիկների ինքնավար շրջանում կատարվում է հետևյալ կերպով. ամբողջ մարզը բաժանված է անգրագիտության վերացման մանր ճակատամասերի։ Անգրագիտության վերացման արշավը թափանցում է լայնածավալ շրջանի ամենախուլ անկյունները։ Այնտեղ, վորտեղ տեղական պայմանների պատճառով չի կարելի գտնել կուլտաշխատողների, նրանց վերցնում են բազմամարդ վայրերից և կուլտ բանակայինը ձիով սիստեմատիկ կերպով մեկնում է սովորեցնելու անգրագետներին։ Անգրագիտության վերացումը Կալմիկիայում շարունակվում է տարվա բոլոր յեղանակները — ամառ, ձմեռ, գարուն և աշունը։ Կուլտ բանակը բաղկացած է կոմյերիտականներից, աշակերտներից, հասարակական աշխատավորներից, մանկավարժներից և այլն։

Այժմ Կալմիկիայում սովորում են մոտ 80 հազար մարդ։ Ցեվ հեռու չէ այն ժամանակը, յերբ տնտեսապես և կուլտուրապես հետամնաց Կալմիկիան լրիվ կվերացնի անգրագիտությունը։ Այժմ Կալմիկիան սո-



ցիալիստական մրցման է կանչել Ներձվոլգայի գերմանացիների հանրապետությանը և Բուրյաթ-Մոնղոլական հանրապետությանը։

Բայց Կալմիկիան մրցման է կանչում վոչ միայն այդ հանրապետություններին։ Նա իր օրինակով և աշխատանքով հրավիրում է իր օրինակին հետևել Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին։ Այս մրցահրավերին պատասխանելու յեն առաջին հերթին ազգային հանրապետությունների և մարզերի կոմյերիտականները։ Միջազգային Երիտասարդական օրվան առթիվ նրանք պետք է ստուգեն, թե ինչ վիճակումն է իրենց մոտ անգրագիտության վերացման գործը։ Ադիգեյի և Կալմիկիայի կոմյերիտականների աշխատանքի հիանալի օրինակները պետք է ստիպեն յուրաքանչյուր կոմյերիտականին մտածել այժմ այն մասին, թե արդյոք ինքը կատարել է իր կոմյերիտական պարտքը, կատարե՞լ է արդյոք Վլադիմիր Իլյիչ Լենինի հրահանգը—վոր յուրաքանչյուր գրագետ սովորեցնելու յե մի անգրագետի։

Հատկապես անթույլատրելի յե այն փաստը, վոր ազգային—կոմյերիտականների մեջ դեռ շատ անգրագետներ կան։ Այս փաստը սև արատ է ամբողջ կոմյերիտական կազմակերպության համար, յուրաքանչյուր գրագետ կոմյերիտականի համար։ Ուստի և յուրաքանչյուր գրագետ կոմյերիտականի պարտքն է ամենակարճ ժամանակամիջոցում գրագիտություն սովորեցնել իր մոտիկ ընկերոջը։ Պետք է հիշել, անգրագիտության վերացումը ազգայինների մեջ՝ հանդիսանում է յուրաքանչյուր կոմյերիտականի քաղաքական կարևորագույն խնդիրը։

Ընդհանուր ուսման համար մղված պայքարն ազ-

գային ռայոններում նույնպես հանդիսանում է կոմյերիտմիության մարտական խնդիրը: Ընդհանուր նախնական կրթությունը անգրագիտության վերացման հետ միասին հանդիսանում է միության առաջնահերթ խնդիրը ազգային կուլտուրական շինարարության ասպարեզում: Այժմ առանձնապես սուր է դրված ազգային աշխատավորներից կադրեր պատրաստելու խնդիրը:

Ներկայումս Մյուդի պատրաստության կազմակերպությամբ պետք է այդ հարցը դնել կտրուկ կերպով:

Այս ամբողջ աշխատանքում յուրաքանչյուր կոմյերիտական պետք է պայքարի լենինյան հստակ գծի համար ազգային հարցում: Պետք է ամուր հարվածել մեծապետական շովինիզմի, որպես գլխավոր վտանգի, և տեղական նեղ նացիոնալիզմի բոլոր արտահայտություններին: Կոմունիստական կուսակցության լոզունգն է «պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք՝ միասին պայքարելու համար բոլոր յերկրների և ազգությունների բուրժուազիայի և կալվածատերերի դեմ»: Այս լոզունգի կենսագործումը սոցիալիստական շինարարության պրակտիկայում, ազգային կուլտուրական շինարարության առօրյա աշխատանքում՝ ամեն մի կոմյերիտականի խնդիրն է:

## ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴՐՈՇԸ

Առաջիկա 17-րդ Միջազգային Յերիտասարդական օրը պետք է բեկում մտցնի կոմսոմոլում իսկական բոլշևիկյան ինտերնացիոնալ աշխատանքը ել ավելի ծավալելու տեսակետից: Ինտերնացիոնալ աշխատանքի և ինտերնացիոնալ դաստիարակության անհրաժեշտության ու կարևորության մասին մենք ունենք շատ լավ



բանաձևեր, բայց այդ գործը դեռևս շատ վատ է դրված մեզանում:

Կենտրոնից հեռու ազգային կազմակերպությունները կապ չեն պահպանում արտասահմանի մեր յեղբայրական կոմյերիտական կազմակերպությունների հետ: Շատ կոմյերիտականներ նույնիսկ գաղափար չունեն այն մասին, թե ինչպես են ապրում, աշխատում և պայքարում ջահել բանվորները, բատրակները այն յերկրներում, որտեղ իշխում է կապիտալը: Յեվ չիմանալով այդ, նրանք հաճախ մոռանում են, որ մեր կատարած գործը մի մասն է ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի ընդհանուր գործի:

Նման դրությունն այլևս անհանդուրժելի յե: Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է միշտ և ամենուրեք հիշի, որ ինքը զինվոր է Յերիտասարդության Կոմունիստական Ինտերնացիոնալի (ԿԻՄ) մեծ բանակի: Գիտենալ իր բանակի հաղթանակները և պարտությունները, իմանալ, թե ինչպես են պայքարում նրա զանազան մասերը, պարտավոր է յուրաքանչյուր կոմյերիտական: Այս պարտականության անհրաժեշտությունը գիտակցող ընկերը պետք է և լինի առաջին նախաձեռնարկը մշտական սերտ կապ հաստատելու արտասահմանի մեր յենթաշեֆ կոմյերիտական կազմակերպությունների հետ: Արտասահմանյան ընկերների հետ յեղած թղթակցությունները չպետք է լինեն չոր, պաշտոնական: Արտասահման ուղարկված յուրաքանչյուր նամակը պետք ոգնի այնտեղի ընկերներին նրանց առօրյա պայքարում: Իսկ այդ նշանակում է, որ պետք է գրել մանրամասն նամակներ այն մասին, թե ինչպես է ապրում բանվոր յերիտասարդությունն այս կամ այն վայրում, շնորհիվ խորհրդային իշխանության ձեռնարկումնե-

րին, ինչպես ե ապրում կոլխոզներում միացած գյուղացի յերիտասարդությունը: Անհրաժեշտ ե գրել այն մասին, թե ինչպես նախկին ցարական Ռուսաստանի ստրուկներն այժմ դարձել են հավասար ազատ ժողովուրդներ և մասնակցում են սոցիալիզմի կառուցման ընդհանուր գործին:

Այս ամենը մեծ ոգուտ կբերի արտասահմանի մեր ընկերներին, վորով նրանք որը—որին գործարանում, գյուղում, զորքում մերկացնում են այն սուտ զրպարտությունը, վոր գիտակցաբար տարածում են կապիտալիստները և նրանց գործակալները խորհրդային միության դեմ: Պետք գրել նաև կոմյերիտական բջիջի աշխատանքի փորձի մասին և աշխատավոր յերիտասարդության մասսաների կազմակերպման գործում: Այդ փորձից կարող ե սովորել և կսովորեն արտասահմանի կոմյերիտականները:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐԸ ՍՏՈՒԳԵՆՔ ՄԵՐ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային Յերիտասարդական որը ծնվել ե համաշխարհ. իմպերիալիստական պատերազմի բոցերում 1915 թվին: Նա կազմակերպվեց արյունալի պատերազմի դեմ պայքարելու նպատակով: Առաջին Միջազգային յերիտասարդական որերի լոզունգն ե. «Կորչի իմպերիալիստական պատերազմը»: Այժմս ել, յերբ ամբողջ աշխարհի հեղափոխական յերիտասարդությունը 17-րդ յերիտասարդական որը ցույցի դուրս կգա այդ լոզունգը «Կորչի իմպերիալիստական պատերազմը» լինելու յե գլխավոր լոզունգը: Ճիշտ ե, այդ 17 տարիների ընթացքում տեղի յեն ունեցել խոշորագույն անցքեր, առանձնապես այնպիսի մի իրողություն, ինչպես Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորը իր հետ բերեց պրոլետարիատի դիկտատուրան յերկրագնդի մեկ վեցերորդ մասում: Սակայն աշխարհի հինգ վեցերորդ մասը դեռևս գտնվում ե կապիտալի իշխանության տակ, վորը շարունակ պատրաստվում ե արյունալի պատերազմի, հատկապես իր գլխավոր թշնամու—այն յերկրի դեմ, վորին ղեկավարում ե պրոլետարիատը: Մենք վերևում արդեն նկարագրեցինք, թե ինչպես կապիտալիստները պատրաստում են այդ հարձակումը: Այժմ մենք պետք ե ընդգրկենք, վոր խորհրդային միության յուրաքանչյուր կոմյերիտականի, յերիտասարդ բանվորի, կոլտնտեսականի, չքավորի ու միջակի ամենաառաջին պարտականությունն ե միշտ պատրաստ լինել պաշտպանելու իր յերկիրը: Պետք ե հիշել, վոր այդ պարտականությունը հանդիսանում ե ինտերնացիոնալ պարտականություն; վորովհետև պատրաստվելով պաշտպանել ԽՍՀՄ, մենք պատրաստվում ենք պաշտպանելու համաշխարհային պրոլետարիատի, ամբողջ աշխարհի ճնշվածների հայրենիքը:

Կոմսոմոլի 9-րդ համագումարը հատկապես ընդգծեց կոմյերիտմիության ռազմական պատրաստության կարևորությունը: Համագումարը նշեց, վոր ՀԱՄԼԿՅԵՄ շարքերում տեղ չունեն այնպիսի կոմյերիտականներ, վորոնք որը—որին չեն պատրաստվում յերկրի պաշտպանության, չեն սովորում ռազմական գործը: Մինչև Մյուդը մենք պետք ե բոլոր կազմակերպությունների մեջ այնպես անենք, վոր բոլորն անխտիր տիրապետեն հրացանին, գնդացիրին, ուսումնասիրեն ռազմական մեքենաները—տանկերը, թնդանոթները և այլն: Միջազգային յերիտասարդական որվա ցույցը

պետք է վերածել մեր մարտական պատրաստության, զենքը ձեռին Խորհրդային Միությունը, սոցիալիզմ կառուցող յերկիրը պաշտպանելու կարողության ցույցի:

Կեցցե՛ Մյուդը—կապիտալի դեմ և սոցիալիզմի կառուցման համար մարտնչող յերիտասարդության հեղափոխական ուժերի ստուգատեսի օրը:

---



ՀՀ Ազգային գրադարան
NL0189076

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. ($1^3/_4$ մ.)

М. АЛЬТМАН

17-ый МЕЖДУНАРОДНЫЙ ЮНОШЕС
ДЕНЬ (МЮД)

Госиздат ССР Армении
Эривань—1931